ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԱՂՈԹՔՆԵՐԸ

Աղոթքն Աստծո հետ հաղորդակցվելու անմիջական ճանապարհն է, որը զորացնում եւ լուսավորում է քրիստոնյային: Ինչպես Ընդհանրական, այնպես էլ Հայոց Եկեղեցու հայրերն ու վարդապետներն աղոթքն անվանել են «հոգու շունչ», առանց որի չի կարող ապրել մարդ: Նրանք հեղինակել են զանազան աղոթքներ՝ օգնելով հավատացյալին առավել մերձենալու Աստծուն եւ զգալու աղոթքի իրական զորությունն իրենց հոգեւոր կյանքում:

Մեր եկեղեցու աղոթագիր հեղինակներից է ԺԳ-ԺԴ դդ. բարձունապետ Կիրակոս վրդ. Երզնկացին († 1355)[1], որից մեզ են հասել երկու գրվածքներ աղոթքի մասին, երկուսն էլ ձեռագիր մեկ ընդօրինակությամբ: Դրանցից առաջինը՝ «Բանք աղաթից խաւսք ընդ Աստուծոյ՝ գրեալ ձեռամբ Կիրակոսի» փոքրիկ գրվածքն է, որը պահպանվել է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի Հմր 1292/75[2] ձեռագրում[3]: Այն առավելապես անդրադառնում է աղոթքի տեսակներին եւ ցույց տալիս, թե քրիստոնյան **ինչպե՛ս եւ ո՛ւմ** համար պետք է աղոթի: Մեծ աղոթասաց Ս. Գրիգոր Նարեկացու նման Կիրակոսի համար աղոթքը «խաւսք ընդ Աստուծոյ» է, որ քրիստոնյան ամեն ժամ պետք է կատարի, զգուշությամբ եւ արտասուքով խոստովանի իր մեղքերն Աստծո առաջ, եւ միայն դրանից հետո կարող է համարձակապես օրհնել Աստծուն: Կիրակոս բարձունապետը հորդորում է օրհնությունից հետո գոհություն հայտնել Աստծուն Նրա առատ պարգեւների համար եւ խնդրել «ասպուաձատուր հոգեւոր պարգեւս» եւ Տիրոջ պահպանությունը՝ կարեւորելով սուրբերի բարեխոսությունն Աստծո առաջ:

Կիրակոս վրդ. Երզնկացու աղոթքի մասին տեսական այս մտածումներն արտացոլված են «Աղաւթք Կիրակոսի փիլիզերալոյս վարդապետի եւ սուրբ վարդապետի ասացեալ» վերտառությամբ եւ «Տէ՛ր Աստուած, մեծ եւ հզաւր» սկսվածքով նրա երկարաշունչ աղոթքում, որը պահպանվել է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի Ամր 1195/1093 ձեռագրում[4]: Այս աղոթքը ձեռագրում կարմրատառ սկզբնավորությամբ ունի նաեւ բաժանումներ «Գոհանամ զՔէն», «Խնդրեմ ի Քէն», «Տէ՛ր Աստուած, ամենափրկիչ», «Տէ՛ր Աստուած, անսկիզբն» եւ «Բարեխաւսութեամբ Սուրբ Աստուածածնի» սկսվածքներով: Կիրակոսի աղոթքում բա-

1 Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Երիզա եւ Եկեղեաց գաւառ, Ա. հատ., Վենետիկ-Ս. Ղազար, 1953, էջ 225-236, «Հայկական Սովետական Հանրագիտարան», հ. 5, Երեւան, 1979, էջ 450-451, **Նորայր եպս. Պողարեան**, Հայ գրողներ Ե-ԺԷ դար, Երուսաղէմ, 1971, էջ 382-384, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 490-491, **Աւետիս քահանայ Դանիէլեան**, Կիրակոս Երզնկացի. «Գանձասար», հ. Զ, Երեւան, 1996, էջ 550-556, **Տիգրան սարկավագ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու «Նախերգան Տեառնընդառաջին» ճառը, «Էջմիածին», 2011, Գ, էջ 82:

2 Կոտորակային այս թվի առաջին համարը գույքահամարն է, իսկ երկրորդը՝ ձեռագրի համարը:

3 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Է., յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, էջ 466, 472:

4 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հ. Զ., յօրինեց Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ-Ս. Ղազար, 1996, էջ 1072-1074: Բանասիրության մեջ Կիրակոս Գանձակեցու եւ Կիրակոս Երզնկացու անձերի, նրանց ապրած ժամանակաշրջանի եւ կենսագրական փվյալների շփոթության պատճառով Շաքուրյանն առանց որեւէ հիմնավորման ժամանակին հավանական է համարել, որ այս աղոթքը Գանձակեցու գրչի արդյունքն է. տե՛ս «Բազմավէպ», Վենետիկ-Ս. Ղազար, 1942, էջ 52: Քաջածանոթ լինելով Կիրակոս Երզնկացու ողջ մատենագրական վաստակին, նրա մտածողությանը, գրելաոճին՝ կարծում ենք, որ այս գրվածքի հեղինակը Կիրակոս Երզնկացին է: Ուստի ճիշտ է ցուցակի կազմող Սահակ վրդ. Ճեմճեմյանը՝ անվանացանկում այն դնելով Կիրակոս Երզնկացու գործերի մեջ:

ցահայտվում է ճշմարիտ քրիստոնյայի կերպարը՝ ուղղափառ հավատքի խոստովանությամբ, մեղքի գիտակցությամբ, զղջման եւ ապաշխարության ոգով մերձենալու Աստծուն: Այն համեմված է սուրբգրային մեջբերումներով եւ ակնարկներով: Աստվածաշնչյան պատկերների եւ անձերի միջոցով նա խրատում է գույները՝ առավել սրություն եւ զգացականություն հաղորդելով իր գրվածքին: Հեղինակը պատկերել է քրիստոնյայի հոգեւոր կյանքը մարմնավոր եւ հոգեւոր ծնունդներից մինչեւ մահ, որը շարունակական անտեղիտալի պայքար է մեղքի եւ չարի դեմ, որի վերջնական նպատակը զղջմամբ եւ խոստովանությամբ մեղքերից ազատագրվելն ու Տիրոջը մերձենալն են: Այս երկում եւս բացահայտվում են Գիրակոս բարձունապետի Սուրբ Գրքի քաջիմացությունը եւ նրա հոգեւոր փորձառությունը:

Գիրակոս Երզնկացու համար Աստված «մեծ եւ հզաւր, անճառելի եւ անպատում, անտեսանելի եւ անիմանալի բնութիւն, անբաւելի, անպանելի, անտեղի եւ անեզրական էութիւն, գթած, ողորմած, անոխակալ, անյիշաչար, երկայնամիտ, բազումողորմ եւ մարդասէր» է, որ նայում է իր մեղավոր եւ անարժան ծառաներին, եւ աղոթքի միջոցով թույլատրում է նրանց՝ խոսելու եւ զրուցելու Իր հետ: Աստծո անչափելի գթության եւ անսահման ողորմության շնորհիվ մարդ կարողանում է առանց միջնորդի հարաբերվել Նրա հետ, որովհետեւ վստահ է, որ Տերն իր նման մեղավորների համար աշխարհ եկավ: Ճիշտ է, ամենագետ Աստված ամեն ինչ գիտե, բայց կարեւոր է, որ մարդ ճշմարիտ խոստովանությամբ իր սիրտը բացի Նրա առաջ: Աստված Սուրբ Մկրտության խորհրդի միջոցով հնարավորություն ընձեռեց սրբվելու, ազատագրվելու մեղքի ճիրաններից, բայց անկյալ մեր բնության պատճառով անհրաժեշտ է մեղքերի խոստովանությամբ նորից Տիրոջը դառնալու՝ ճաշակելով Նրա կենդանարար մարմինն ու արյունը:

Չնայած աստվածատուր բոլոր շնորհներին, հեղինակը, իբրեւ քրիստոնյայի ընդհանրական կերպար, հեռացել է աստվածային պատվիրաններից, անառակ որդի դարձել, ընկել բանսարկուի չար որոգայթների մեջ, բայց նա Տիրոջից ուժ եւ կորով է խնդրում՝ ապաշխարությամբ եւ զղջմամբ դառնալու դեպի Տերը՝ հեռու մնալով չարից: Գիրակոսը հիշատակում է իր գործած բազում մեղքերը, որոնք խոստովանում է Տիրոջը եւ հայցում Նրա անբավ ողորմությունը՝ թողություն ստանալու եւ կրկին լուսավորվելու համար: Մեղքերի այս շարանը, գրելառճը եւ աստվածաբանական մտածողությունը համահունչ են մեղքերի խոստովանությանը նվիրված Գիրակոսի երկու անտիպ երկերին, որոնք ցույց են տալիս, թե ինչպես էր տվյալ ժամանակաշրջանում Հայոց Եկեղեցում կատարվում խոստովանության կարգը[5]:

Պետք է շեշտել, որ քրիստոնյայի զղջական այս վիճակն անհույս չէ, քանզի մեղավորների փրկության համար մարմնացած Աստված ներում է նրանց, ովքեր սրտի զղջումով եւ մեղքերի խոստովանությամբ մոտենում են Իրեն: Գիրակոսը ոչ միայն օրհնում է Աստծուն եւ գոհություն հայտնում Նրա բարերարությունների համար, այլ նաեւ համարձակություն, կատարյալ, աներկմիտ հավատ, հարության հույս է խնդրում՝ իր բազում մեղքերն առանց մոռացության խոստովանելու համար: Նա ցանկանում է Պողոս առաքյալի նման դառնապես լացել, բայց տեսնել երկնքից եկած Տիրոջը եւ Նրա թափուր գերեզմանը: Հիսուսի ոտքերը

5 Մեր ձեռագրական հավաքածուներում Գիրակոս Երզնկացու անունով պահպանվել են մեղքերի խոստովանությանը նվիրված «Խրատ վասն խոստովանութեան» եւ «Վասն խոստովանութեան մեղաց» խորագրերով երկու գրվածք, որոնք նույնպես պատրաստվում են տպագրության:

լվացող պոռնիկի հորդառատ արցունքներն ունենալ, բայց արժանանալ Տիրոջ փրկարար խոսքին. «Քո հավատքը քեզ փրկեց»: Սամարացի կնոջ նման կենդանի ջուրն է ամբողջ սրտով ցանկանում, եւ Տիրոջից բժշկություն հայցում իր մարմնի մասերի համար: Նա ամենուր Աստծո ներկայությունն է ցանկանում վայելել, Տիրոջ հետ լինել ինչպես այս երկրավոր կյանքում, այնպես էլ՝ երկնայինում: «Վասն որոյ աղաչեմ զԱզատիչդ ի մեղաց, զի եւ զիմ ոգիս ազատեալ ի մեղաց սրբեսցես աստուածային իշխանութեամբդ եւ լուսաւորեսցես առ ի Քէն լուսովդ՝ որպէս եւ զաշակերտսն Քո ի Թաբաւական լերինն: Զի եւ ես յերկրորդումն ծագման Քոյոյ փառացդ լուսով Քո հայեցայց ի լոյս երեսաց Քոց դէմ յանդիման, որով պայծառութեամբ լցեալ յագեցայց յերեւել փառաց Քոց»,- խնդրում է Կիրակոս բարունապետը Բարձրյալին:

Իբրեւ միաբանության բարունապետ՝ նա Աստծուց նույն բաներն է խնդրում իր հոգեւոր խնամքի տակ գտնվող եղբայրների համար. «Եւ ի կատարման խնդրական աղաթից իմոց զնոյն աղաչեմ վասն ամենայն եղբարց բարեաց, որք զինքեանս յանձնեալ ինձ՝ մեղաւորիս, կամ խնամեալ իմում պան**ա**խտութեանս, ինայեա՛ եւ ողորմեա՛ նոցա ամենեցուն: Եթէ ապաշխարողք իցեն, տո՛ւր նոցա զաւրութիւն յաղթել սատանայի, եւ ապաշխարութեամբ սրբեալ ի մեղաց եւ Քեզ հաճոյ եղեալ այնպէս եկեսցեն առ Քեզ: Իսկ եթէ արդարք, զի առաւել զաւրացին ի սէր Քո եւ ի պահպանութիւն պատուիրանաց Քոց, եւ համապատիւք եղիցին սրբոց Քոց ի վաղխճանի իւրեանց»: Նա նաեւ խնդրում է հիշել ուղղադավան բոլոր հավատացյալներին:

Աղոթքի վերջին հատվածում Կիրակոսն Աստծու պահպանությունը եւ երկնային արքայության արժանանալն է խնդրում իր ծնողների, վարդապետների, առաջնորդների համար՝ հայցելով սուրբերի բարեխոսությունը:

Այս մեծ աղոթքում Կիրակոս վարդապետը նաեւ մի քանի կենսագրական տեղեկություններ է հաղորդում: Եթե նա տաղերից մեկում նշում է իր ծնողների անունները՝ Հովհաննես եւ Հիպա[6], ապա այստեղ գոհություն է հայտնում Սուրբ Երրորդությանը. «...եւտուր ինձ լինել բարի եւ ի հաւատացեալ ծնաւղաց՝ ըստ սահմանի աւրինաց Քոց սրբութեամբ, եւ անդստին ընդ լինելութեանն իսկոյն ի ձեռն քահանայական շնորհի ի լոյս ածեալ աստուածային ծննդեամբ ծնար զիս ի Սուրբ Աւազանին»: Մեջբերման երկրորդ մասից պարզվում է, որ ծնողները մանուկ Կիրակոսին մկրտել են ծննդից հետո՝ ամենայն հավանականությամբ ութ օրեկանում՝ Հայոց Եկեղեցու ընկալյալ ավանդության համաձայն: Կիրակոսը նաեւ գոհություն է հայտնում Սուրբ Երրորդությանը, որ կռապաշտության խավար ժամանակ չի ծնվել, այլ քրիստոնեության ուղղափառ հավատքի: Նա շնորհակալություն է հայտնում, որ Աստված իրեն ազատել է հերձվածողներից, բարբարոսներից եւ նշում իր եկեղեցական լինելը. «Եւ եւտուր ինձ լինել ազգս Արամեանս՝ ի վիճակ մեծ առաքելոյն Լուսաւորչի եւ խոստովանողի Սրբոյն Գրիգորի, եւ ինեւ կրաւնաւորութեան կոչեցեր զիս, որ է հանգոյն զուարթնոցն»:

Կիրակոս վրդ. Երզնկացին իր բոլոր գրվածքներում շեշտում է ուղղափառ հավատքի կարեւորությունը մարդու կյանքում՝ հորդորելով հավատարիմ մնալ Հայոց Եկեղեցու ճշմարիտ դավանությանը՝ գրելով. «Տե՛ս, Տէր, եւ մի՛ երկայնամտեր առ այն եւ մի՛ անտես առներ զտառապեալ եւ զկոխան եղեալ ծառայս Քո՝ զգինս սուրբ արեան Քո, զհաղորդեալս

6 Տե՛ս **Ն. Քյուրտյան**, Անտիպ տաղեր Կիրակոս վարդապետ Երզնկացիէ. «Էջմիածին», 1965, Ը-Թ, էջ 97:

ի կենդանարար մարմին Քո եւ յաստուածարար արիւն Քո, որ գիտես զհաւատս իմ, որ ի Քեզ, եւ զխոստովանութիւնն յայտնապէս ի Սուրբ Երրորդութիւնդ, ի խաչ Քո, եւ յԵկեղեցի Քո, եւ յաստուածային խորհուրդ Քո»: Այս աղոթքում եւս Կիրակոսը, դիմելով Աստծուն, նշում է, որ իրեն համարձակություն է տալիս «անբիծ եւ ուղիղ հավատքը». «Եւ արդ, Տէ՛ր իմ, գթած եւ ողորմած, հայեա՛ յիս՝ յանարժան ծառայս քո, ի խնդրուածս, որ բազմամեղ անձամբ եկեալ կամ առաջի Քո, եւ ոչինչ ունիմ յինէն համարձակութիւն, բայց միայն զանբիծ եւ զուղիղ հաւատս, եւ ի սրտէ զթողութիւն զամենեցունց»: Մեկ այլ տեղ՝«Եւ ոչ ինչ ունիմ յինէն բարի ամենեւին մատուցանել Քեզ, բայց միայն զուղիղ հաւատս եւ զյաւժարութիւն հոգոյս»: Այս մտահոգությամբ է պայմանավորված, որ հեղինակն օգտագործում է «ուղղադավան եղբայրներ», «ուղիղ հավատք», «Ուղղափառ Եկեղեցիներ» արտահայտությունները:

Կիրակոս վրդ. Երզնկացին այս երկում եւս անդրադառնում է վարդապետական խնդիրների: Հավատարիմ լինելով Հայոց Եկեղեցու ուղղափառ դավանությանը՝ նա նշում է, որ Սուրբ Երրորդության երեք անձերը՝ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին մեկ են ըստ բնութեան, աստուածության, կամքի, զորության, իշխանության, անբավության եւ անսահմանության[7]: Նրանց մասնակցությամբ կատարվեց արարչագործությունը «յոչէից եւ յանգոյից եւ յաննիութից», այդ թվում նաեւ դրա թագ եւ պսակ հանդիսացող մարդ արարածը, որը ստեղծվեց «Աստծո պատկերով եւ նմանությամբ»: Բայց Սուրբ Երրորդության անձերը զանազանվում են իրենց առանձնավորական հատկություններով: Հայր Աստված «անծին եւ անպատճառ» է՝ «ոչ յայլմէ սկիզբն է կամ ի պատճառէ», Որդի Աստված «ի միոյ Հարէ՝ ծնեալ անբաժանելի բնութեամբ յառաջ քան զամենայն, եւ զբնաւ յաւիտեանս Հար հաւասար յամենայնի», իսկ Սուրբ Հոգի Աստված «բղխումն ի Հարէ անձնաւորութեամբ հանգուսակ Միածնին, անհատ եւ անորիշ բնութեամբ ի Հարէ եւ [յ]Որդ[ւոյ], յանբաւ եւ անսահման էութիւն, գիտաւոր կնիք եւ սահման Հար եւ Որդւոյ մեծութեանն, որ բանդակես եւ բանդակիս ի Հայր եւ յՈրդի: Ելեալ ի Հարէ եւ առեալ ի յՈրդւոյ՝ ըստ որում Հոգի Հար եւ Հոգի Միածնին ըստ Գրոց, յամենակալ արարչակից բոլոր յաւիտեանց եւ ժամանակաց, եւ խնամաւոր, եւ նորոգիչ, եւ հաստատութիւն իմանալեաց եւ **ա**գալեաց արարածոց, երկնաւորաց եւ երկրաւորաց, բանաւորաց եւ անբանից»: Օգտագործելով «արարչակից» աստվածաբանական եզրը՝ Կիրակոսն ընդգծում է Սուրբ Հոգու մասնակցությունն արարչագործությանը. «Այրհնեալ է խնամք մարդասէր ողորմութեան Քո, Հոգի՛**ր** ճշմարիտ, քանզի որ ի սկզբանն արարչակից գոլով Որդւոյ՝ կազմեցեր զարարածս, եւ ի նոր արարչութեանս կամաւ Հար եւ գործակցութեամբ Որդւոյ ի գալստեան Քում ի Սուրբ Վերնատունն՝ ի դասս սուրբ առաքելոցն, վերստին նորոգեցեր եւ կազմեցեր զմեռեալ եւ զապականեալ բնութիւն մեղաւք ամենայն մարդկան: Ուստի Քեզ լուսաւորեցաք ամենեքեան ծնունդեամբ Սուրբ Աւազանին եւ արժանի եղաք որդեգրութեան Հար եւ եղբայրութեան Միածնին, վասն որոյ փառաւորեմք եւ երկիրպագանեմք ամենակեցոյց գալստեան Քո, Հոգի՛**ր**, ճշմարի՛տ Աստուած»: Աստվածաբանական վերոգրյալ մտածումներին Կիրակոսն անդրադարձել է նաեւ ՃԹ· սաղմոսի եւ Հովհաննեսի Ավետարանի Ա 1 համարի մեկնություններին նվիրված ճառերում[8]:

---

7 Հմմտ. **Գարեգին արդ. Մարգիսեան,** Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութիւնը ըստ հայ շարականներու, Կանադա, 2003, էջ 132-133:

8 Տե՛ս **Տիգրան սարկավագ Բաղումյան**, Կիրակոս վարդապետ Երզնկացու, ՃԹ· սաղմոսի մեկնությունը. «Էջմիածին», 2011, Դ, էջ 107:

Քրիստոսաբանական տեսանկյունից շահեկան է աղոթքի հետեւյալ հատվածը, որտեղ աղոթագիրն անդրադառնում է Որդի Աստծո մարդեղության խորհրդին. «Ուստի խոնարհեցար Աստուածդ յԱստուծոյ՝ Միածին Որդի**ս,** եւ եկիր բնակեցար ի սուրբ յարգանդի Մարիամու՝ Ամենասուրբ Կուսին, անտանելի՛դ Տարր, Անբովանդակելի՛դ բովանդակեցար եւ ի Հարէ ոչ մեկնեցար, եւ ամենեքեան լցելով Քեւ եւ գործակցութեամբ Սուրբ Հոգւոյդ եւ կամաւք զաւրութեամբ Հաւր հովանավորեալ Սուրբ Կուսին՝ յղացար առանց սերման եւ ապականութեան՝ ճշմարտութեամբ առեալ մարմին, հոգի, միտս՝ զբոլոր մեր բնութիւնս, որով զբովանդակն փրկեցեր»:

Միով բանիվ՝ մեր առաջ կրկին հառնում է Հայոց Եկեղեցու ուղղափառ դավանությանը նախանձախնդիր մի եկեղեցական, որի պատգամներն արդիական են մեզ համար: Այս երկու բնագրերի հրատարակության նպատակն է եւս երկու միավորով ամբողջացնել Կիրակոս վրդ. Երզնկացու մատենագրական ժառանգությունը:

Այսպիսով՝ առաջին բնագիրը հրատարակում ենք ըստ **Վեն. Մխիթ. մատ. ձեռ. Հմ 1292/75, էջ 360բ-362ա, 1625** թ., թուղթ 10,6x15,5. միա**սիւն, նոտր մանր,** 21 տող: Իսկ երկրորդն ըստ Վեն. Մխիթ. մատ. ձեռ. Հմ 1195/1093, էջ 278-391, 1639 թ., գրիչ՝ Աւետիք երէց, տեղ՝ Թոխատ, Ս. Պարսամի եկեղեցի, թուղթ 11x15, միասիւն, բոլորգիր, 22 տող: Այս բնագրի պատրաստության ժամանակ վերականգնել ենք բառավերջերի չգրված յ-երը, զանց ենք առել յ-ի եւ գաղտնավանկ ը-ի անտեղի գործածությունները: Գրչագրում առկա աւ-ի եւ օ-ի զուգահեռ գործածություններից նախընտրությունը տվել ենք աւ տարբերակին: Այս ձեռագրում «ու»-ի փոխարեն հաճախ հանդիպող «ւ»-ն ուղղել ենք, իսկ ուղղագրական խոտոր ձեւերը նշել թավ տառատեսակով եւ թողել անփոփոխ: Տերունական անունները եւ նրանց փոխարինող դերանունները ներկայացրել ենք մեծատառով՝ առավել հստակ եւ ճշգրիտ դարձնելու համար նախադասությունների իմաստները: Անհրաժեշտության դեպքում մեր կատարած հավելումներն առնված են անկյունավոր փակագծերի մեջ՝ []9:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԲԱՂՈՒՄՅԱՆ

9 Մեր խորին շնորհակալություն ենք հայտնում Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր Տ. Եղիա ծ. վրդ. Քիլաղպյանին՝ վերոգրյալ ձեռագրերի թվային տարբերակները ստանալու համար:

ԲԱՆՔ ԱՂԱՒԹԻՑ ԽԱՒՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ՝ ԳՐԵԱԼ ՀԵՌԱՄԲ ԿԻՐԱԿՈՍԻ, ԵՒ ՈՒՆԻ ԱՒՐԻՆԱԿ ՀԱՅՍ

Ամենայն անձն աստուածասէր, որ ջերմ յաւժարութեամբ մատչի Աստուծոյ յանձնել իւրմէ աղաւթս մատուցանել՝ պարապելով ի զբաղմանց երկրաւորաց, այսպէս արժան է ըստ այսմ կարգի մա/360բ/տուցանել, զոր Աստուածային Գրոց բանք յայտնի արարեալ են:

Նախ՝ պարտ է աղաւթականին, որ յամենայն աւուր եւ ի ժամու աղաւթիւք խաւսիլ ընդ Աստուծոյ, իսկ զբան աղաւթիցն նուիրել զինքն Աստուծոյ: Եւ ապա մեծ զգուշութեամբ եւ արտասուաւք խոստովանել զամենայն մեղս իւր Աստուծոյ: Ապա ի ձեռն խոստովանութեանն համարձակութիւն առնու աւրհնել զԱստուած: Եւ ապա զկնի աւրհնութեանն գոհանալ զանպատում պարգեւաց Նորա: Եւ յայնժամ խնդրել ի նմանէ զամենայն աստուածատուր հոգեւոր պարգեւս: Զկնի այնորիկ պահպանութիւն խնդրել ինքեան եւ բարեացն, որ ի Տեառնէ, ապա զի ընկալցի զխնդրուածսն Տէր: Եւ այս ի ձեռն բարեխաւսութեան ամենայն սրբոցն Աստուծոյ: Ի սմին աղաչել մինչ ի վաղճան, եւ ի վաղճանի պարգեւաւք հաճոյ լինել Տեառն: Եւ ապա գլխաւորել վասն վաղճանի իւրոյ աղաւթս Տեառն Աստուծոյ: Քանզի այժմ է ժամանակ ամենայն մարդոյ հոգալ զկեանս իւր՝ առ ի յուղղել եւ Աստուծոյ հաճոյ լինել, եւ յԱստուած աղաւթիւք եւ սիրով /361ա/ յարել, եւ վասն հանդերձելոցն եւ վաղճանի աւուրն այժմ պարտ է հոգալ եւ ոչ յայլս վստահանալ, զի մեծ բարեկամ ինքն է ինքեան, քան զայլ ոք: Եւ են աղաւթքս այս տասն գլուխ, ունին յինքեանս եւ մասնաւորս:

Առաջին գլուխ՝ նուիրականն, երկրորդ գլուխ՝ խոստովանողականն, երրորդ գլուխ՝ աւրհնաբանականն, չորրորդ գլուխ՝ գոհացողականն:

Եւ ունի մասնաւորս չորս: Առաջին մասնաւորն՝ ընտրականն, երկրորդ մասնաւորն՝ տրականն, երրորդ մասնաւորն՝ ժամանակականն, չորրորդ մասնաւորն՝ աշտիճանականն:

Հինգերորդ գլուխ՝ խնդրականն: Եւ ունի յինքեան մասնաւորս երկու եւ գլուխս Ժ.: Առաջին մասնաւորն՝ եղբայրականն, երկրորդ մասնաւորն՝ հասարակականն:

Վեցերորդ գլուխ՝ պահպանականն, եւթներորդ գլուխ՝ ընդունականն, ութերորդ գլուխ՝ բարեխաւսականն, իններորդ գլուխ՝ աղա/361բ/չականն, տասներորդ գլուխ՝ վաղճանականն:

Եւ ունի մասնաւորս երիս: Առաջին մասնաւորն՝ հասարակաց ննջեցելոց ի Քրիստոս: Երկրորդ մասնաւորն՝ ծնողաց, եւ սիրելի եւ խնամակալ վարդապետաց, հարց եւ եղբարց ի Քրիստոս ննջեցելոց: Երրորդ մասնաւորն՝ թշնամեաց ատեցաւղ եւ չարարար եղբարց ի Քրիստոս ննջեցելոց եւ կենդանեաց, որ էին ի մարմնի. եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

ԱՂԱՒԹՔ ԿԻՐԱԿՈՍԻ
ՏԻԵԶԵՐԱԼՈՅՍ ԵՒ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ

Տէ՛ր Աստուած՝ մեծ եւ հզաւր, անճառելի եւ անպատում, անտեսանելի եւ անիմանալի բնութիւն, անբաւելի, անտանելի, անտեղի եւ անեզրական էութիւն, մի աստուածութիւն, Սուրբ Երրորդութիւն՝ Հայր, եւ Որդի, եւ Հոգի Սուրբ՝ գթած, ողորմած, անոխակալ, անյիշաչար, երկայնամիտ, բազումողորմ եւ մարդասէր: Հայեաց յերկնից ի պատրաստ բնակութենէ Քումմէ ի մեզաւոր եւ յանարժան ծառայս Քո, որ թախծեալ մտաւք եւ անհամարձակ երեսաւք, վշտալի սրտիւ եւ անմխիթար ոգով, եկեալ կամաւ առաջի Քո՝ ահաւոր եւ ամենատես աստուածութեանդ, եւ զողալով սարսռելի երկիւղիւ, արտասու/278/ալից աչաւք եւ հոգեւոր ակամբ հայիմ ի Քեզ, որ զամենայն լնուս եւ յամենայնի ես, եւ զամենայնն պարունակես եւ ամենեցուն մերձ ես, Աստուա՛ծ: Դու Քոյով անչափելի գթութեամբդ ետուր մեզաւորաց՝ խաւսել ընդ Քեզ զէմ յանդիման յամենայն ժամ: Դու տեսանես յայտ յանդիման զսիրտ եւ զխորհուրդ ամենայն մարդկան, եւ ամենեցուն ամենայն մտածութեանց շարժմունք առաջի Քո են յամենայն ժամ եւ նախքան զշարժել խորհրդոց: Ուստի եւ ես՝ բազմամեղս, այսաւր կալով յաղաւթս առ Քեզ, մեծայորդոր փութով եւ կամաւոր յաւժարութեամբ բանամ զսիրտ առաջի Քո ճշմարիտ խոստովանութեամբ, եւ տարածեմ զհառաչանս իմ խնդրուածովք եւ պաղատանաւք /279/ Քեզ զէմ յանդիման եւ ըստ աստուածեղէն բանի Քո, թէ՝ «Որ խնդրէ, առնու» (Մատթ. Է 8): Հաւատամ տալ ինձ, զոր աղաչեմն, որ եկիր կոչել զմեղաւորս յապաշխարութիւն եւ ասացեր, թէ՝ «Եկա՛յք առ Իս ամենայն աշխատեալք և«ւ բեռնաւորք, «եւ Ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28): Ըստ այսմ երանական կոչմանս եկեալ «եւ ես՝ ծանրաբեռնեալս, առ ապաւէնդ Աստուած եւ յոյսդ կենաց նախ զնուիրական աղաւթս մատուցանեմ Քեզ: Նուիրեցայ Քոյովդ շնորհաւք եւ պարգեւաւք զառաջինն՝ ի Սուրբ եւ ի Լուսաւոր Աւազանին ծնեալ վերստին Հոգւովդ Քով Սրբով՝ [յ]որդեգրութիւն Հաւրդ երկնաւորի եւ յեղբայրութիւն մարդասէր Միածնիդ: Որ եւ զբնութիւնս մեր առեալ բովանդակ՝ /280/ խառնեցեր եւ միացուցեր ի Քո աստուածութիւնդ, եւ նոյնպէս զՔեզ՝ ճշմարի՛տդ Աստուած, միացուցեալ մերով բնութեամբ, խառնեցեր ի մեզ ի ձեռն ճշմարիտ կերակրոյ եւ ըմպելոյ մարմնոյ եւ արեան Քո, որպէս եւ ասացեր իսկ, թէ՝ «Որ ուտէ զմարմին Իմ «եւ ըմպէ զարիւն Իմ, Նա յիս բնակեսցէ, եւ Ես ի Նմա» (Յովհ. Զ 57):

Եւ արդ, Տէ՛ր բարերար, զայնպիսի զանպատում, զաստուածարար պարգեւս Քո կորուսի մեղաւք իմովք, եւ զդաշինս հրաժարմանն յամենաչար բանսարկուէն, եւ ի պիղծ յապստամբ հրեշտակաց նորա ոչ պահեցի, այլ հետեւեցայ գործաւք, եւ բանիւք, եւ խորհրդովք զհետ անաւրէն կամաց նորա, եղէ անառակ որդին, ընկալայ զմեծատուր, զառատ զպարգեւս /281/ ամենաբարի Հաւրդ, ցրուեցի զամենայն եւ ունայնացայ ի հեռանալն ի Քէն, որով եղէ սովամահ՝ չքաւորեալ յամենայն բարեաց: Ուստի մահաբեր կարիս աղքատութեան իմոյ, ի յիշատակ ածեալ ինձ զքաղցր, զամենագութ Հայրդ, յորմէ դարձեալ ի չարէն դառնամ առ Քեզ եւ անկեալ առաջի Քո հառաչեմ՝ ասելով. «Հա՛յր, մեղայ յերկինս «եւ առաջի Քո» (Ղուկ. ԺԵ 18):

Տո՛ւր ինձ նախ հպել առ Քեզ եւ խաւսել ընդ Քեզ եւ ընկալ զաղաչանս իմ՝ պարգե-

ւելով զլուսափայլ զոգեստ պատմուճանի ծածկութիւն շնորհաց Քոց զառաջինն, եւ ագո՛ զոտս իմ կաւշկաւք զաւրութեան՝ կոխել զմոլորեցուցիչ, զչարագործ բանսարկուն եւ հետեւել զվերին, զերկնաւոր |282| ճանապարհն առ Քեզ եւ զի՛ր յաջոյ ձեռին իմում զամենապահ մատանի կնքոյ պատկերի Քո՝ անտեսել զհիւսիսական ձախու արեւմտեանս եւ լինել արեւելային զիմաւք յառաջագնաց բարեաց ճանապարհացն ժառանգորդ, զի այսու ձրիւք համարձակեալ՝ դարձեալ ելից ի նուիրական աղաւթս:

Նուիրեմ զիս այժմ Քե՛զ, բարեգո՛ւթ Աստուած, ամենայն սրտիւ, եւ անձամբ, եւ զաւրութեամբ իմով՝ ատել զբանսարկուն եւ զամենայն մոլորական շաւիղս նորա, հեռանալ յամենայն երկրաւոր եւ աշխարհական հոգոց, եւ ըստ բնաւ կարի իմում ընծայեցուցից զիս Քեզ յայսմհետէ մարմնով, եւ շնչով, եւ հոգով, եւ մտաւք իմովք, որով ընծայիւ նուիրականաւ |283| մատչիմ ի խոստովանութիւն՝ համարձակապէս մատուցանել զխոստովանական աղաւթս առաջի ամենագէտ աստուածութեանդ Քո: Եւ զոր այժմ ասացից նախ, զի յամենայն կողմանց շրջափակեալ տեսանեմ զբազմութիւն մեղաց իմոց, քանզի, Աստուածդ ճշմարիտ, որ յառաջդ ես քան զամենայն յաւիտեանս եւ երբ որ կամեցար, եկիր առնել զարարածս՝ զերեւելիս եւ զաներեւոյթս, զիմանալիս եւ զգալիս, միտս հոգեղէնս եւ զգալի մարմնեղէն շնչով եւ հոգւով կազմեալ: Եւ կենդանարար փչմամբ Ամենասուրբ Հոգւոյդ ամէնիմաստ եւ նախատես ըստ յամենայնի զարդարեալ զմարդն եդիր զնա ի դրախտին փափկութեան, ուստի ճոխացեալ եւ վերացեալ |284| քան զբնութիւն իմ՝ յաստուածութիւնդ Քո կամեր վերանալ: Ուստի մերկացեալ ի լուսոյ փառաց՝ ամաւթալից եղեալ թաքչէր ամենատես աչաց Քոց: Իսկ Դո՛ւ, Հա՛յր, բարեգո՛ւթ Աստուած եւ Տէ՛ր ողորմութեանց, երկայնամիտ եւ քաղցր խոնարհութեամբ Քո, իբր հեռացեալ ի պատուիրանազանց ի մեղաւոր ծառայէն Քո, մերձաւորդ յամենայնի բացական զՔեզ ձեւացուցեալ, ոտնաձայն առնելով գալստեան Քո՝ ի խոստովանութիւն ապաշխարութեան զնա կոչէիր, որպես զի արտասուաւք եւ մեղայիւ անկեալ առ ոտն Քո, պա՛րզդ եւ իմացակա՛նդ Աստուած, ողորմութեան արժանի լինէր ի Քէն: Իսկ նա, խոստացեալ եւ յիմարարեալ ամաւթալի մեղացն, պատճառ հայթայթէր |285| ի կենակիցն արձանացուցեալ զվնասն, ուստի դատապարտեալ երեւեցան ի Քէն:

Եւ արդ, Տէ՛ր բարերար, եթէ ես զիմ կենաց պատուիրանն պահեալ էի, զոր ի Քէնդ ընկալայ, Դու Քո ամենասուրբ ծննդեամբ եւ մահուամբ ազատեցեր զիս ի դատակնքէ պատժոց նախահաւրն: Այլ քանզի եւ ես առաւել պատուիրանազանց եղէ քան զնա, կորուսի զանմահ, զաստուածարար պարգեւսն, որ ի Քէն շնորհեցաւ ինձ: Ըստ որում դարձեալ պարտիք նախահաւրն եկին ի վերայ իմ, զոր խոստովանիմ առ Քեզ բազում հառաչանաւք զնոյն, քանզի իմ է նորայն, եւ որ յամենայն դարս ըստ ժամանակաց բնաւ մարդիկք մեղան, ես հաղորդ գտայ նոցին չարեացն: |286| Եւ զի՞նչ է ինձ ըստ ժամանակացն յերկարել զխոստովանութիւն, քանզի ըստ իս ոչ բաւ եմ պատմել զբազմութիւն մեղաց իմոց, Աստուա՛ծ, այլ միայն առաջի անկեալ ճշմարիտ խոստովանութեամբ, որ գիտեսդ զամենայն՝ ըստ բանի սուրբ մարգարէին (հմմտ. Դաւ. ԺԳ 42) ասացից եւ պատմեցից յինձէն զմեղս իմ, եւ Դու թողցես ինձ զամենայն ամբարշտութիւնս մեղաց իմոց:

Խոստովանիմ նախ զգործս իմ զչարս՝ զհետեւեալս բանսարկուին կամաց ի մանկութենէ մինչեւ յաւուրս յայս, քանզի ես ինձէն կամաւոր յաւժարութեամբ ընթացայ ի մեղս

մեծամեծս՝ ի չնութիւն, ի պոռնկութիւն, որով զեղբայրն ատէի, ի սպանութիւն, ի գողութիւն, որով յաչազէի զեղբաւրն, յափշտակութիւն, |287| յագահութիւն, յերդմնահարութիւնս՝ առեալ զամենասուրբ, զամէնաւրհնեալ անուն Քո ի բերան իմ, զի Դու ինքնին պատուիրեցեր Աստուած՝ մի՛ երդնուլ (տե՛ս Մատթ. Ե 34-36): Իսկ զբանից, զոր կարացից թուել զբազմութիւն չարեաց իմոց, զի որպէս զհոսանս գետոց միշտ բղխեն յինէն բանք անաւրէնութեան, բամբասանաց, տրնտջելոյ, չարախաւսութեան, հայհոյութեան, նախատանաց, անարգանաց, թշնամանաց, հենգնելոյ, ծաղու, խեղկատակութեան, դատարկաբանութեան, շոքմոգութեան, սուտ վկայութեան, մատնելութեան, ընդ որս եւ ստութեան եւ ուրացութեան, խծբծելոյ եւ քննելոյ զանհաս եւ զանքննին տեսչութիւն դատաստանաց: |288| Եւ նախախնամութեան Քո, զոր պարտ էր ինձ ապ ի բերան կալ, եւ միայն լռութեամբ երկիր պագանել տէրութեանդ ամենայնի:

Եւ զբարուց զի՞նչ ասացից՝ խոստովանելով Քեզ, բազմագո՛ւթ Աստուած, յորս անչափ եւ անթիւ տրամեցուցի զՔեզ վասն իմ սրտմտութեամբ, բարկութեամբ, փառասիրութեամբ, ամբարտաւանութեամբ, մարդահաճութեամբ, նախանձու, ոխակալութեամբ, երկմտութեամբ, անյուսութեամբ, վհատութեամբ ի Քէն, անկարեկցութեամբ, անմիաւորութեամբ, նենգութեամբ, խորամանկութեամբ: Եւ զոր խոստովանեցայց, զի քան զթիւ անձրեւաց բազում տեսանեմ զմեղս իմ, զոր Դու միայն գիտես զամենայն անծածուկ եւ յայտնի:

Իսկ զգայարանաց զի՞նչ ասացից |289| առաջի Քո, Տէ՛ր, զի մեղայ Քեզ աչաւք իմովք, նախ զի արատ հայեցուածովք ի դէմս զանազանս կուտեցի ի հոգի իմ բազում չնութիւնս եւ պոռնկութիւնս՝ ըստ աստուածային Քում բանի, թէ՝ «Անդէն շնացաւ ընդ նմա ի սրտի իւրում» (Մատթ. Ե 28): Նոյնպէս եւ զլսելիս իմ ետու ի լուր չար բանից՝ պիղծ եւ գարշ խաւսից ախտաւորաց, որ եւ յակամայ եկին յիս բազում չարիք:

Արդ եւ ճաշակելեաւքս մեղայ Քեզ, Տէ՛ր, որկորստութեամբ, արբեցութեամբ, անսուրբ եւ անարժան կերակրովք:

Վա՛յ ինձ՝ մեղաւորի՛ս, զի եւ շաւշափելեաւքս եւ հոտոտելեաւքս բարկացուցի զՔեզ, Տէ՛ր Աստուած՝ յանմերձենալիսն մերձենալով, վաւաշոտ եւ ստահակ աներկիւղութեամբ, եւ գժանդ եւ գգարշ |290| հոտ պղծութեան առեալ յիս, վասն որոյ եւ ոչ եղէ արժանի անուշահոտութեան Հոգւոյդ Սրբոյ, որով եւ զբազումս ի կենաց ի կեանս վերացուցանէ:

Խոստովանիմ առաջի Քո, Տէ՛ր, եւ զխորհրդոց իմոց՝ մեղս զանազանս, եւ բազմապատիկս, եւ զանթիւ մթերազանցեալ քան զաւազ ծովու, վասն զի զվերազրեալ ողբս հառաչանաց խոստովանութեանս զբնաւն: Նախ խորհրդովք կատարեցի եւ ապա բանիւք եւ գործովք, բարուք եւ զգայարանաւք, որ եւ տակաւին անհատ եւ աններելի տանջէ զիս կամաւ եւ յակամայ, մարդկայնաւք եւ աներեւոյթիւք, ճառելեաւք եւ անճառելեաւք: Եւ վա՛յ ինձ, ե՞րբ զերծանիցիմ ի բղխմանէ չար եւ բորբոքիմ պղծութեանն, որով եւ տանջիմս՝ չարչա|291|րեալ զաւրհանապազ՝ զտիւ եւ զգիշեր:

Եւ ժամ է այժմ զԵսայիային ասել ինձ, զոր հոգելից մարգարէն զայլս ողբայր, ես զիս ողբացից անմխիթար սգով: Ո՞վ առնոյր եւ առնէր գաչս իմ աղբերս արտասուաց, զի նստէի եւ լայի զմեղս իմ զաւրհանապազ՝ ի տուէ եւ ի գիշերի առնելով զմարգարէին Դաւթի. «Եղեն ինձ արտասուք իմ կերակուր ի տուէ ե«ւ ի գիշերի» (Սաղմ. ԽԱ 4), եւ թէ՝ «Վաստակեցի ի հեծութեան իմում, լ[ու]ացի զամենայն գիշեր ի մահիճս իմ «եւ արտա[սուաք իմովք զանկողինս իմ թացի]» (Սաղմ. Զ 7):

Եւ արդ, Աստուա՛ծ գթութեանց եւ Աստուա՛ծ ողորմութեանց, ի մասնէ գխոստովանութիւնս իմ ընկալ, զոր հանապազ մատուցանեմ առաջի անոխակալ եւ անյիշաչար տէրութեանդ Քո, եւ արժանի արա զանարժանս թողութեան եւ ողորմութեան ի Քէն՝ ըստ աստուածային խոստման բանի Քո |292| մարգարէին, թէ՝ «Ասա՛դու նախ զանաւրէնութիւնս քո, զի արդարացիս» (Եւ. ԽԳ 26): Եւ ես խոստովանիմ միշտ բոլորով սրտիւ իմով:

Տո՛ւր ինձ արդարապէս համարձակութեամբ բանալ զբերան իմ, եւ բարձ յինէն զամաւթ բերանափակ մեղաւորիս, որ ոչ ունի իշխանութիւն աւրհնել զՔեզ կամ առնուլ ի բերան զուխտս Քո եւ զաւրէնս Քո, որպէս զի շնորհաւք Քո ի ձեռն ճշմարիտ խոստովանութեան աւրհնեցից զամէնաւրհնեալ անուն Քո, եւ այսպէս մատուցից զաւրհնաբանողական աղաւթս առաջի անկարաւտ, ամենապարգեւ բարձրացեալ տէրութեանդ Քո:

Աւրհնեմք զՔեզ, Ամենասո՛ւրբ Երրորդութիւն եւ մի աստուածութիւն:

Աւրհնեմք զՔեզ՝ Հայր, եւ Որդի, եւ Սուրբ Հոգի, մի եւ երիս անձինս, երիս եւ մի բնութիւն՝ աստուածութեամբ, |293| կամաւք եւ զաւրութեամբ, իշխանութեամբ, անբաւութեամբ, անսահմանութեամբ:

Աւրհնեմք զՔեզ, Հա՛յր ամենակալ, ի Քո յանսկզբնութեանդ, որ անծին եւ անպատճառ, ոչ յայլմէ սկիզբն է կամ ի պատճառէ, այլ մի Հայր՝ մշտնջենաւոր բնութիւն:

Աւրհնեմք զՔեզ, Միածի՛ն, մի Որդի ի միոյ Հաւրէ՝ ծնեալ անբաժանելի բնութեամբ յառաջ քան զամենայն, եւ զբնաւ յաւիտեանս Հաւր հաւասար յամենայնիւ: Ի Հաւրէ սկիզբն է, եւ անսկիզբն ի ժամանակէ մինչեւ ի կէտ մի մտաց շարժման կամ կամաց, ոչ վերջացեալ ի Հաւրէ անհաս, անքննին եւ անճառելի ծննդեամբ, որպէս գիտէ Հայր՝ ծնաւղ Քո, եւ Դու ծնեալ ի նմանէ ամենակալ Արարիչ ամենայնի՝ յաւիտեանց եւ ժամանակաց, |294| սգալեաց եւ իմանալեաց, բանաւորաց եւ անբանից, երկնաւորաց եւ երկրաւորաց:

Աւրհնեմք զՔեզ, Հոգի՛, բղխումն ի Հաւրէ անձնաւորութեամբ հանգունակ Միածնին, անհատ եւ անորիշ բնութեամբ ի Հաւրէ եւ [յ]Որդ[ւոյ], յանբաւ եւ անսահման էութիւն, գիտաւղ կնիք եւ սահման Հաւր եւ Որդւոյ մեծութեանն, որ բաւնդակես եւ բաւնդակիս ի Հայր եւ յՈրդի: Ելեալ ի Հաւրէ եւ առեալ ի յՈրդւոյ՝ ըստ որում Հոգի Հաւր եւ Հոգի Միածնին ըստ Գրոց, յամենակալ արարչակից բոլոր յաւիտեանց եւ ժամանակաց, եւ խնամաւղ, եւ նորոգիչ, եւ հաստատութիւն իմանալեաց եւ սգալեաց արարածոց, երկնաւորաց եւ երկրաւորաց, բանաւորաց եւ ան|295|բանից: Եւս եւ յարութիւն մեզ ի վաղճանի յաւիտենիս այսորիկ:

Աւրհնեալ ես, Սո՛ւրբ Երրորդութիւն, յառաջ քան զամենայն յաւիտեանս ի մշտնջենաւոր եւ անսկիզբն էութեան Քո:

Աւրհնեալ ես ի կամս բարերար ողորմութեան Քո, որ յետոյ ուրեմն կամեցար առնել արարածս յոչէից եւ յանգոյից եւ յաննիւթից ածեալ ի մէջ էութիւն, անմարմին եւ գոյութիւն նիւթական ըստ բնաւից, զոր ունէիր բացակալ եւ յայտնի երեւակայութեամբ զբոլորս առաջի Քո կարգեալ որիշ զամենայն, վասն զի ոչ նորոգիս ի գիտութեան Քում:

Աւրհնեալ ես արարչագործութեամբ իմանալի հոգեղինացն՝ հրեշտակաց անթիւ, անբովանդակելի էութեանցն, որ Քեզ արարչամիտ միայն |296| են գիտելի ամենայնիւ, ինքնագաս կարգաւ աստիճանի բարձրութեամբ մինչեւ ի Քեզ վերացուցեր՝ խաւսել ընդ Քեզ եւ տեսանել զՔեզ, որ անհասդ ես յամենայնի:

Աւրհնեալ ես արարչութեամբ երկնին վերին, որ եւ հրեղէնն ասի, եւ հաստատութեամբդ, զոր երկրորդ երկին կոչեցեր ըստ բաժանման ջուրց ի վեր եւ ի խոնարհ: Եւ երկրի չորիւք տարերաւք եւ յաւդս պարունակաւք եւ եւթամբք:

Աւրհնեալ ես արարչութեամբ ծովու եւ ցամաքի, լերանց, եւ դաշտաց, եւ բլրոց, եւ տուընջեան եւ գիշերոյ, եւ բուսոց եւ տնկոց եւ դրախտին անապական վայելչութեամբն:

Աւրհնեալ ես արարչագործութեամբ զարմանասքանչ գեղեցիկ եւ լուսափայլ մեծի տարերն արեգական, որ լայնատարած մեծութեամբ զանցանէ քան զընդարձակութիւն |297| ծովու, եւ ցամաքի, եւ լուսնի՝ նորին զուգակցի, եւ յոգնազան անթիւ բազմութեան աստեղացն:

Աւրհնեալ ես արարչութեամբ ամենայն կենդանեաց, զոր յերիր տարերս բնակեցուցեալ գետեղեցեր ի ծովու, ի յաւդս եւ ի ցամաքի: Եւս բիւրապատիկ յամենայնիւ յամենայնի:

Աւրհնեալ ես, Ամենասո՛ւրբ Երրորդութիւն, որ մեծախորհուրդ կամաւք Քո ստեղծեր զմարդն ի վերայ երկրի, մարմին, հոգի եւ միտս ի միասին գոյացուցեր ի հակառակիցն մի կենդանի, եւ հոգւով շնորհաց ի Քէն լցուցեր, որով ամէնիմաստ գիտութեան արժանի եղեւ Քեզ, պատկեր եւ նմանութիւն արարեր, որ ի վեր ես քան զամենայն պատկեր եւ զնմանութիւն:

Աւրհնեալ ես, անոխակա՛լ եւ քա՛ղցր Տէր, զի եւ յանկանելն մարդոյն յերեսաց Քոց զնորին ծննդոց զսէր, եւ զհնազանդութիւն, |298| եւ զընծայս ընկալար, որով զնոսա ի Քեզ բարձրացուցեր հոգւով՝ զԱբէլ, զՍէթ, զԵնովս եւ այլս բիւրաւորս:

Արդ, ի վերայ ամենայնի աւրհնեալ ես, միաբո՛ւն Սուրբ Երրորդութիւն, որ ի վերջ ժամանակաց միահաղոյն կամեցար կեցուցանել զազգս մարդկան՝ զկորուսեալս ի բանսարկուէն՝ ոչ հանդուրժելով նորին չարութեանն, վասն որոյ միակամ սիրով Սուրբ Երրորդութիւնդ ի խնդիր ելեալ ազգի մարդկան: Որպէս յարարչագործելն յոչնչէ, նոյնպէս եւ ի կորնչելն բոլորովին մեղաւք, ներգործելն արարչութեամբ զբնութիւնս մեր հանդերձ սգալի արարածովքն, որ ապականեցան: Ուստի խոնարհեցար Աստուածդ յԱստուծոյ՝ Միածին Որդիս, եւ եկիր բնակեցար ի սուրբ յարգանդի Մարիամու՝ Ամենասուրբ Կուսին, |299| անտանելի՛դ Տարր, Անբովանդակելիդ բովանդակեցար եւ ի Հաւրէ ոչ մեկնեցար, եւ ամենեքեան լցելով Քեւ եւ գործակցութեամբ Սուրբ Հոգւոյդ եւ կամաւք զաւրութեամբ Հաւր հովանավորեալ Սուրբ Կուսին՝ յղացար առանց սերման եւ ապականութեան՝ ճշմարտութեամբ առեալ մարմին, հոգի, միտս՝ զբոլոր մեր բնութիւնս, որով զբովանդակն փրկեցեր:

Աւրհնեալ է փրկագործ գալուստ Քո, Քրիստո՛ս Աստուած մեր:

Աւրհնեալ է գթութիւն ողորմութեան Քո, Քրիստո՛ս Աստուած, բժի՛շկ բարեաց, որ յայտնեցար ի կեցուցանել զազգս մարդկան:

Աւրհնեալ է ամենակեցոյց խաչելութիւն Քո, Քրիստո՛ս, եւ կենդանարմատ փայտ խաչի Քո, որ ետուր զսա մեզ «պարիսպ ամրութեան», «ախոյեան «եւ զէնն ընդդէմ աներ:ույթ թշնամոյն»[1]: |300|

Աւրհնեալ է կամաւոր եւ ճշմարիտ մահ Քո վասն մեր, Քրիստո՛ս Աստուած մեր, քանզի մահուամբ Քո սպաներ զմահ դատապարտութեան մերոյ՝ իջանելով ի գերեզման, Աստուա՛ծդ անմահ: Ուստի եւ մեր բանական հոգւովս, զոր աւանդեցեր ի ձեռն Հաւր Քո, եւ

1 Տե՛ս «Մատենագիրք Հայոց», Ը. հատոր, Շարական, Անթիլիաս-Լիբանան, 2007, էջ 559, 562:

խաչիւ Քո իջեալ ի վայրս դժոխոց, եւ զնիգս նորա փշրեցեր, եւ զարգիլեալ հոգիսն ազատեցեր ի նմանէ:

Աւրհնեալ է փրկագործ, աստուածարար, հրաշալի եւ ամենալոյս յարութիւն Քո, Քրիստո՛ս Աստուած մեր, որ նորոգեցեր զբնութիւնս մեր եւ բարձեր զամենայն արտաւոր յամենայն երեսաց:

Աւրհնեալ է հիանալի եւ փառաւոր համբարձումն Քո, Քրիստո՛ս, որ իբրեւ զպսակ բոլորեալ յաւրինեցեր զամենայն եւ զմիացեալ բնութիւնս մեր ի Քեզ առեալ՝ վերացուցեր ի փառս հայրենի /301/ ընդ աջմէ Հաւր, ուստի Դու ոչ մեկնեցար եւ յարարածոց Քոց ոչ հեռացար ըստ անհատութեանդ:

Աւրհնեալ է խնամք մարդասէր ողորմութեան Քո, Հոգի՛ւ ճշմարիտ, քանզի որ ի սկզբանն արարչակից գոլով Որդւոյ՝ կազմեցեր զարարածս, եւ ի նոր արարչութեանս կամաւ Հաւր եւ գործակցութեամբ Որդւոյ ի գալստեան Քում ի Սուրբ Վերնատունն՝ ի դասս սուրբ առաքելոցն, վերստին նորոգեցեր եւ կազմեցեր զմեռեալ եւ զապականեալ բնութիւն մեղաւք ամենայն մարդկան: Ուստի Քեւ լուսաւորեցաք ամենեքեան ծննդեամբ Սուրբ Աւազանին եւ արժանի եղաք որդէգրութեան Հաւր եւ եղբայրութեան Միածնին, վասն որոյ փառաւորեմք եւ երկիրպագանեմք ամենակեցոյց գալստեան Քո, Հոգի՛ւ, ճշմարի՛տ Աստուած: /302/

Աւրհնեալ է միւսանգամ գալուստ Քո, Թագաւո՛ր երկնաւոր եւ Աստուած, Յիսո՛ւս Քրիստոս, յորժամ դաս հայրական փառաւք՝ առնել յարութիւն ամենայն բնութեան եւ հատուցանես իւրաքանչիւր ըստ գործս իւր:

Աւրհնեալ ես, Ամենասո՛ւրբ Երրորդութիւն, խաղաղութեա՛ն Թագաւոր, որ համառաւտ ի քթթելական առնես զամենայն եւ խաղաղացուցանես զերկինս եւ զերկիր:

Եւ արդ, հասեալ յաւարտ սակաւուկ աւրհնաբանի աղաւթիցս, զոր անհամարձակ բերանով եւ անմաքուր ոգով եւ մտաւք զՔոյտ Քեզ մատուցանեմ: Այսուհետեւ յիս դարձայց եւ ընդ իս բարեգործութեան աւրհնեցից զՔեզ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, զի եւ զիս զանարժանս լուսաւորեցեր վերստին ծննդեամբ Սուրբ Աւազանին, եւ ծանուցեր ինձ զանուն Քո, եւ զգիտութիւն Քո շն/303/որհեցեր ինձ, եւ արժանի արարեր զիս խոստովանել զՔո աստուածութիւնդ, եւ հաղորդ արարեր զիս անճառ պարգեւաց մարմնոյ եւ արեան Քո, որ թէպէտ եւ մեղաւք շաղախեալ կորուսի զաստուածեղէն պարգեւս Քո: Դու ոչ դարձար յինէն ի բաց, այլ դարձեալ ածեր զիս ի ճշմարիտ խոստովանութիւն եւ ետուր ինձ յոյս ապաշխարութեան: Վասն որոյ անդադար բանիւ եւ հոգով աւրհնեմ զՔեզ եւ գոհանամ զՔէն, եւ գոհաբանութեան աղաւթս մատուցանեմ Քեզ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

Գոհանամ զՔէն, Արարի՛չ արարածոց, Սո՛ւրբ Երրորդութիւն, որ անչափ երկայնամտեցեր առ ազգս մարդկան, քանզի մարդն առաջին, ամենաբարի եւ ամենաշնորհ եղեալ ի Քէն, ապստամբեաց անզգջութեամբ եւ ամենաչար /304/ բանսարկուին կցորդ եղեալ յապստամբութիւն: Այլ Դո՛ւ, Ողորմա՛ծ, ոչ ի կորուստ մատնեցեր եւ ոչ բնաւ ի Քէն ի բաց մերժեցեր որպէս զբանսարկուն, այլ զթացեալ ակամայ՝ ապաշխարութիւն ածեր ի ձեռն տաժանման քրտան եւ աշխատութեան, տրտմութեան, երկանց, արտասուաց եւ հեծութեան: Եւ զսպառնացեալ մահն յառաջագոյն մասնաւոր արարեր մարմնոյ եւ շնչոյ միայն եւ ոչ իշխանակա-

նին հոգոյ եւ մտաց, առ ի յոյս կենդանութեան երկուցն առ յապա, եւ յանմահութենէն ի հող դարձուցեր, զի կորեալ հատցի բազմութիւն մեղաց:

Գոհանամ զՔէն, գթա՛ծ, անոխակա՛լ Աստուած, որ կենարար գալստեամբդ Քո յերկիր եւ յայտնութեամբ աստուածութեանդ Քո ազգի մարդկան զկորուսեալ բնո|305|ութիւնս մեր գտեալ նորոգեցեր, զամենայն ազգի մարդկան զմեղս թողեր մինչ ի կատարած, որ հաւատան ի Քեզ՝ զմաքսաւորս, զպոռնիկս, զաւազակս, եւ զբնաւ ամբարիշտս ոչ ի բաց մերժեցեր ի Քէն: Նաեւ զխաչահանուսն սրբեցեր ի մեղաց, որ դարձան առ Քեզ: Զհոգի Քո Սուրբ շնորհաւք հեղեր յամենեսեան՝ ի փրկել, ի նորոգել, ի կեցուցանել զամենայն մարդ, որ եւ կրկին շաղախեալս մեղաւք յետ աստուածային վերստին ծննդեանն դարձեալ խոստովանութեամբ եւ զղջական արտասուաւք ապաշխարութիւն կոչեցեր, եւ ետուր աւետիս կենաց ճշմարիտ ապաշխարողաց անյիշելի զմեղս ի Քէն, որով եւ համարձակութիւն դատանել առ Քեզ եւ ի կեանս յաւիտենականս փառաւք յարքայութեան Քում: |306|

Գոհանամ զՔէն, Ամենասո՛ւրբ Երրորդութիւն, որ յետ այսորիկ ետուր ինձ լինել բարի եւ ի հաւատացեալ ծնաւղաց՝ ըստ սահմանի աւրինաց Քոց սրբութեամբ, եւ անդստին ընդ լինելութեանն իսկոյն ի ձեռն քահանայական շնորհի ի լոյս ածեալ աստուածային ծննդեամբ ծնար զիս ի Սուրբ Աւազանին: Եւ զկենդանարար մարմին եւ զարիւն Քո ետուր ինձ կերակուր, եւ բազում այլ շնորհս պարգեւեցեր ինձ, եւ յայսր ամենայն ձրից վերայ, թէպէտեւ ես իմով անձնիշխան յաւժարութեամբ եւ չար խորհրդովք ոչ պահեցի զսրբութիւն Քո յիս, այլ շաղախեալ մեղաւք՝ արարի զիս որպէս զանառակ որդին: Իսկ Դո՛ւ, գթա՛ծ Տէր, ետուր ինձ յոյս՝ զղջմամբ եւ խոստովանութեամբ դարձեալ գալ, յապաշխարութեամբ, եւ սգով, եւ արտասուաւք եւ բեկեալ սրտիւ յամենայն ժամ խոստ|307|ովանել առաջի Քո եւ ակն ունել թողութեան մեղաց եւ հաշտութեան Քո ի ձեռն կենդանարար արեան եւ մարմնոյ Քո, Քրիստո՛ս, զոր բաշխեալ ետուր ի թողութիւն ամենայն աշխարհի:

Գոհանամ զՔէն, Ամենասո՛ւրբ Երրորդութիւն, որ ոչ ետուր ինձ ժամանակս խաւարեալ կռապաշտութեան գալ ի մէջ, այլ ժամանակս հազար ամի արքայութեան Քո՝ ի լցեալս կարգաւք եւ ուղղափառ հաւատով քրիստոնէութեան եւ ի հերձուածողաց եւ ի բարբարոսաց ի բաց հաներ զիս: Եւ ետուր ինձ լինել ազգս Արամեանս՝ ի վիճակ մեծ առաքելոյն Լուսաւորչի եւ խոստովանողի Սրբոյն Գրիգորի, եւ ինեւ կրաւնաւորութեան կոչեցեր զիս, որ է հանգոյն զուարթնոցն: Վասն որոյ այսիւ ամենայնիւ բարձրացեալ ի Քէն, թէպէտ եւ անարժան գտայ յամենայնի, |308| սակայն յանարգամեծար տէրութիւն Քո ապաւինեալ՝ խնդրական աղաւթս մատուցանեմ առաջի քաղցր աստուածութեանդ՝ հանդերձ արտասուաւք եւ լի հաւատովք եւ երկրպագութեամբ առնուլ ի Քէն, որ հայցեմն:

Խնդրեմ ի Քէն, ողորմա՛ծ Աստուած, կատարեա՛ յիս զաստուածային, զանսուտ խոստումն Քո, զոր հրամայեցեր, թէ՝ «Որ խնդրէ՝ առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, «եւ որ բախէ՝ բացցի նմա» (Մատթ. Է 8), եւ թէ՝ «Խնդրիցէք «եւ առնուցուք» (Մատթ. ԻԱ 22): Եւ դարձեալ՝ «Զամենայն զոր ինչ խնդրիցէք յանուն յՈրդւոյ ի Հաւրէ, տացի ձեզ» (Յովհ. ԺԵ 16, ԺԶ 23): Եւ դարձեալ, թէ՝ «Երկու ի ձէնջ միաբանիցին յերկրի, զամենայն զոր ինչ խնդրիցեն, եղիցի նոցա» (Մատթ. ԺԸ 19): Եւ թէ՝ «Զոր ինչ խնդրիցէք աղաւթիւք «եւ հաւատայք, թէ առնուցուք, եղիցի՛ ձեզ» (Մարկ. ԺԱ 24):

Եւ արդ, Տէ՛ր իմ, գթած եւ ողորմած, հայեա՛ յիս՝ յանարժան ծառայս քո, |309| ի խնդրուածս, որ բազմամեղ անձամբ եկեալ կամ առաջի Քո, եւ ոչինչ ունիմ յինէն համարձակութիւն, բայց միայն զանրիծ եւ զուղիղ հաւատս, եւ ի սրտէ զթողութիւն զամենեցունց, որ ինձ մեղուցեալ են կամ իզուր զիս զրպարտեալ են, զոր եւ Դո՛ւ, մարգասէ՛ր Աստուած, խոստացար, թէ՝ «Թողուցուք ի սրտէ զ[յ]անցանս եղբարց ձերոց, թողցէ «եւ ձեզ Հայրն երկնաւոր զյանցանս ձեր» (Մատթ. Զ 14):

Այս է առաջին խնդրուածք իմ, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, զի մի միայն ըստ ջանալոյ յաւժարութեան իմոյ գործակցեսցես առ իս, զի ծոյլ, եւ հեզգ, եւ տարտամ, եւ ունայն է հոգի իմ, եւ մարմին իմ ի ջանուց եւ ի ճգանց առաքինութեան, զոր Դու գիտես առաւել քան զիս: Վասն որոյ Դու Քոյին գթութեամբդ յայսմհետէ առեալ զիս առ Քեզ ճգեսցես որպէս զրազումս, |310| զորս Քեզ շնորհաւք հաճոյ արարեր:

Եւ այժմ, Տէ՛ր իմ, կամեաց ընդ կեանս ընդ փրկութիւն անձին իմոյ, որ «ոչ կամիս զմահ մեղաւորին, այլ զդառնալն «եւ զկեալն» (հմմտ. Եզեկ. ԺԸ 23) եւ կամիս՝ «Զամենայն մարդիկք, զի կեցցեն «եւ ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն» (Ա Տիմ. Բ 4), զի «առատապէս տաս ամենայնի» (Յակ. Ա 5), եւ բաց է զուռն ողորմութեան Քո:

Եւ երկրորդ խնդրուածք իմ, զի տացես ինձ անցիր, անսրաղ միտս եւ հոգի եւ կատարեալ հաւատս, զի աներկմիտ եւ ընդ երկար կատարեցից զխնդրուածս իմ զաւրհանապազ զաւուրս կենաց իմոց մինչեւ հասից առ Քեզ եւ զկատարումն տեսից, զի մի՛ եկեսցէ ի վերայ իմ սպառնացեալ պատուհասն, թէ՝ «Այր երկմիտ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր, մի՛ ակն կալցի մարդն այն առնուլ ինչ յԱստուծոյ» (Յակ. Ա 7-8): |311|

Եւ երրորդ խնդրուածք իմ, զի տացես ինձ, ամենաբարի՛ Տէր, զհուր բորբոքեալ աստուածային սիրոյ Քո, որում ցանկացար ասելով, թէ՝ «Կամիմ, զի արդէն իսկ բորբոքէր» (Ղուկ. ԺԲ 49), զի սաստիկ տոչորմամբ այրեսցէ զխռիւ դիզեալ անչափ մեղաց իմոց, եւ զահ անաչառ դատաստանի Քո, եւ զերկի[ւ]ղ հրոյ գեհենին յաւիտենից, եւ զյիշատակ անսահման մահու կարճ աւուրց կենաց իմոց, ուստի ի մեծ զղջումն եկեալ պարգեւաւք Քո յիս ահագին երկիւղիւ եւ սարսռելի զողութեամբ: Եւ բաց աչաւք հոգոյս իմոյ առաջի իմ զՔեզ տեսանեմ յամենայն ժամ, խոստովանեցայց Քեզ զրազմութիւն անթիւ մեղաց իմոց, որպէս հրամանքդ զգուշացուցեր՝ ասելով. «Արթո՛ւն կացէք, զգոյշ[2] լերուք եւ հսկեցէ՛ք, զի ո՛չ գիտէք զաւրն «եւ ո՛չ զժամն» (Մատթ. ԻԵ 13):|312|

Եւ չորրորդ խնդրուածք իմ խնդրեմ ի Քէն, առա՛տ Տէր:

Տո՛ւր ինձ, Տէ՛ր, միտս եւ յիշողութիւն անմոռանալի միշտ, եւ հանապազ զմտաւ ածել զմեղս իմ, եւ զնոյն խոստովանել առաջի Քո, զի մարդկան մի անգամ կամ երկիցս խոստովանել ոչ էի բաւական յիշել զամենայնն, այլ միայն զգլխաւորն եւ զմեծամեծսն կարացի ասել: Այլ Քեզ, որ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի Քո, եւ զամենայն շարժումն հոգոյս իմոյ եւ նախքան զշարժելն գիտես, զի եւ ես ողորմութեամբ Քով զբովանդակն Քեզ զյայտնիսն կարացից թուել արտասուաւք առաջի Քո՝ զմարմնականսն, զհոգեկանսն, զբարոյականսն, զգայարեանսն, զընաւորականսն, զախտաւորականսն, զկամաւորականսն, զակամայսն, զանձառականն, զընկերականսն, զակն առականսն յինէն, զպատ|313|ճառա-

2 Բնագրում՝ զգուշ:

կանան, զանձնիշխանականսն, զդիւականսն առանց իմ գործակցութեան, մանաւանդ զչարաչար, զյանդուգն, զլիրբ, զկատաղեալ դիւին հայհոյութեան զանճառ ցնորսն, զոր մերկապէս ընդ վճեալ Քե՛զ, Տեա՛ռն Ամենակալի, յանդիման ջանայ եւ զիս, որ քոյ եմ ճշմարիտ կորուսանել զագիներան, զորոյ զչարին մարդոյ ոչ է հնար խոստովանել, այլ Քեզ միայնոյ, որ տեսանես զչարչարանս իմ ի նմանէ, բողոքեմ եւ դառնապէս ողբամ եւ ասեմ:

Տե՛ս, Տէր, եւ մի՛ երկայնամտեր առ այն եւ մի՛ անտես առներ զտառապեալ եւ զկոխան եղեալ ծառայս Քո՝ զգինս սուրբ արեան Քո, զհաղորդեալս ի կենդանարար մարմին Քո եւ յաստուածարար արիւն Քո, որ գիտես զհաւատս իմ, որ ի Քեզ, եւ զխոստովանութիւնն յայտնապէս ի Սուրբ Երրորդութիւնդ, |314| ի խաչ Քո, եւ յեկեղեցի Քո, եւ յաստուածային խորհուրդ Քո:

Տե՛ս, հայեաց, Տէր, ի կատաղին յայն, որ ըստ յայսմ յանդգնի ըստ Քեզ, ըստ Խաչի, ըստ Եկեղեցւոյ եւ խորհրդոյ Քո: Մարդոյ ընդ բերան հանել ոչ կարէ, զի չէ յինէն, այլ ի նմանէ՝ ի ժանտագործ թշնամոյն, ի սպանողէն հանապազ զիս, որ Դու վկայեալ յայտնեցեր զայս մեզ, ճշմարի՛տ Դատաւոր, ողորմած, մի՛ ընդ այսր զիս դատեր կամ յանդիմաներ ի դատաստանի Քում կամ բնաւ ի խիղճ եւ ի վնաս ինձ համարիր: Զիս գիտես՝ որքան զսուր ընդ սիրտ իմ հանել կամ խողխողել զիս, ծանր է ինձ այս: Անմարմին, աներեւոյթ է չարն, եւ գաղտնի եւ անընդոստ յանմարմին միտս իմ եկեալ խաւսի, զոր խաւ|315|սի եւ գնայ, եւ դարձեալ գայ շունն կատաղի:

Ամենակա՛լ, ամենազաւ՛ր Տէր, հա՛ր գնա եւ սպա՛ն յինէն, կարկեա՛ զբերան նորա, կտրեա՛ զյարձակումն նորա, հա՛ր զզաւրութիւն նորա, դատեա՛ գնա եւ կապեա՛ անլուծանելի կապանաւք յառաջ քան զհանդերձեալ կապանսն, մի՛ տար բնաւ տեսանել նմա զիս եւ մի՛ զայլ ոք, որ Քոյ են:

Յիշեա՛, զի վասն իմ եղեր մարդ եւ ծառայ Արարչիդ, վասն իմ շրջեցար ի վերայ երկրի, վասն իմ անարգանաց, եւ նախատանաց, եւ թշնամանաց, եւ հայհոյելոյ զՔեզ համբերեցեր, վասն իմ մատնեցար, եւ կապեցար, եւ ապտակեցար, եւ թուք ի ժանտից ընկալար, փշովք պսակեցար, եղեգամբ հարեալ դանեցար, ի դատաւորէն տանջեցար, վասն իմ ի խաչ ելեր, բեւեռեցար, |316| քացախ եւ լեղի արբեր, տիգաւ խոցեցար, մեռար, ի գերեզմանի եդար, որ եւ յարեար, Աստուա՛ծդ անչարչարելի եւ անմահ, եւ զՔոյսս զամենեսեան ընդ Քեզ յարուցեր:

Յիշեա՛ զայս ամենայն եւ փրկեա՛ զիս ի գազանէն յայնմանէ: Գիտես, Տէ՛ր, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, զի թէ ի բնէ հաճոյ եւ եղեալ Քեզ ոչ ունէր իշխանութիւն սատանայ մերձենալ յիս, բայց զի յինէն առեալ նա համարձակութիւն, զամենայն նետս, մուխս դառնութեանն թափեաց յիս, զոր այժմ խնդրեմ ի Քէն, Տէ՛ր, ազատեա՛ զիս ի նմանէ յայսմհետէ, եւ ընկալ զպաղատանս իմ յապաշխարող բերանոյս եւ ի սրտէս:

[Ե]ւ հինկերորդ խնդրուածք իմ այս են, ամենապարգեւ՛ Տէր:

Տո՛ւր ինձ արտասուս առատաբուխս, շնորհեա՛ |317| ինձ զմաքրիչ շնորհս զայս, հա՛ր զսիրտ իմ քաղցր սիրոյ հարուածովք, զի եւ ես արժանի եղէց յասել. «Խոցոտեալ սիրով եմ ես» (Երգ Բ 5), որպէս զի այսու պարգեւաւք յամենայն աշխարհէ սուգ մեծ զգեցայց անմերկանալի: Եւ յիս եկեալ զխիղճ եւ զվէրս հոգոյ իմոյ տեսեալ ողբացից զաւուրս կենաց զամենայն մեղս իմ:

Տո՛ւր ինձ, Տէ՛ր, զսուրբ մարգարէին վաստակել ի հեծութիւնս, լուանալ զամենայն գիշերս յորդ արտասուաւք զմահիճս իմ, զաւրհանապազ տրտում ոգով շրջել, զմոխիր եւ զարտասուս ընդ հացի եւ ընդ ըմպելոյ համարել, զի կարացից ասել եւ ես. «Բարձր առնեմ զՔեզ Տէր, զի ընկալար զիս և«ւ ոչ ուրախ արարեր զթշնամին իմ յիս» (Սաղմ. ԻԹ 1): Եւ թէ՝ «Պատառեցեր զքուրց իմ» (հմմտ. Դ Թագ.Ե 8) եւ «Զգեցուցեր ինձ զփրկութիւն» (հմմտ. Սաղմ. ԺԷ 33): |318|

Տո՛ւր ինձ արտասուել դառնապէս որպէս սուրբ առաքեալն Պետրոս, զի եւ ես արժանի եղէց տեսանել զՔեզ երկնից եկեալ եւ ոչ ի գերեզմանէ:

Տո՛ւր ինձ զյորդառատ արտասուս պոռնկին, որով լուացից զոտս[3] Քո, զի ես արժանի եղէց լսել ի Քէն. «Հաւատք քո կեցուցին զքեզ» (Ղուկ. Է 50):

Տո՛ւր ինձ զսուգն երանելի, զի արժանի եղէց մխիթարութեան Հոգւոյն Սրբոյ:

Կատարի՛չ խնդրուածաց, կատարեա՛ զխնդրուածս իմ, որպէս զի աւազան երկրորդ արարից զարտասուս իմ՝ ի սրբել զսպիս վիրաց հոգւոյ իմոյ, որպէս բազում եւ անթիւ մեղաւք արարին շնորհաւք Քո, զի եւ ես արժանի եղէց լուսոյ որդեգրութեան փառաց: Այսու ծանեայց, թէ հաշտեցար ընդ յիս, |319| զի այս պարգեւս սուրբ տացես ինձ լիապէս ի Քէն, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ:

[Վ]եցերորդ խնդրուածք իմ այս են, ամենասո՛ւրբ Տէր, չարատեա՛ց եւ մեղսատեա՛ց Աստուած, զի զժանտ եւ զամենապիղծ ամբարիշտ բանսարկուն հանդերձ ամենայն չար եւ ապստամբ հնազանդեցելովք իւրովք գիւաւք հեռացեալ մերժեսցես յինէն՝ մանաւանդ գիշխանս նորա եւ զպետս նորա: Նախ, զոր կորստութեանն, որ ի սկզբանէ կորոյս զազգս մարդկան, զոր սուրբքն «բազմագլուխ գազան» կոչեցին՝ զպոռնկութեանն՝ թարախածրար, ժանտահոտ կատաղին, զագահութեանն՝ զանյագ անաւրէնն, զտրտմութեանն, զբարկութեանն, զամբարտաւանութեանն, զձանձրութեան, զմոռացութեանն, զկեղծաւորութեան, |320| զմարդահաճութեան, զանձնահաճութեան, զերկիւղի, զանգթութեան, զանկարեկցութեան, զնեղասրտութեան, զանլրութեան: Եւ զայլ անթիւ չարաթոյն ոգեկորոյս մարդասպան չունն, որ բնակեալ են յոգիս մարդկան՝ ի սատակումն եւ ի կորուստ ամենայն խաբելոց եւ պատրեալ պատրեցելոցն, որ ամենայնքս առաջի Քո, յայտնի է գիւականն եւ մարդկայինն, կամաւոր կցորդութիւնն եւ ակամայ տանջանք սրբոցն ի նոցանէ:

Արդ, ամենազա՛ւր եւ չարատեա՛ց Աստուած, Քոյին զաւրութեամբդ կործանեա՛ զնոսա: Եւ զիս՝ զհարեալս եւ զյաղթեալս ի նոցանէ եւ զկոխան եղեալս յայսմհետէ փրկեա՛ եւ մի՛ տար յապականութիւն նոցա: Ո՛ աղաչեմ եւ խնդրեմ, ողորմա՛ծ եւ, քա՛ղցր, եւ բարերա՛ր Աստուա՛ծ իմ եւ Տէ՛ր իմ: |321|

[Ե]ւթներորդ խնդրուածք իմ այս են, Փրկի՛չ իմ եւ ապաւէ՛ն իմ, Տէ՛ր, զի զկնի գիւացն կործանմանն ի Քէն զիշխականս յիս հանդերձ սգալեաւս կնքեալ պահեսցես Քո ամենակարող զաւրութեամբդ, զի զմի անգամ կամ զերկիցս խոստովանեալսն եւ Քեզ՝ Բարերարիդ, առաջի անկեալս ապաշխարութեամբ ըստ ամենայն մեղաց մասանց յիս գործոց, բանից եւ խորհրդոց կամաւորաց եւ յակամայից: Մի՛ տացես ինձ անդէն ի նոյն փսխած անկանել եւ ատելի Քեզ լինել՝ ըստ առակի բանի (հմմտ. Առակ. ԻԳ 11), այլ ի նոյն առկայանալ, նովին ճանապարհաւ յառաջանալ առ Քեզ բարութեամբ: Ո՛ եւ ի նոյն աղաչեմ եւ խնդրեմ,

3 Բնագրում՝ զոտքս:

զի զընդդիմակսն կործանեալք եւ որ յիս զճշմարիտ լոյսն առաքինի |322| արդարութեամբ բազմահոյլ արմտեաւք եւ պտղաւք իմովք նորոգեսցես յիս: Նախ զատելութիւնն ի սրտէ մահաբեր բազմակերպ մեղաց եւ ի բոլոր աշխարհասէր աշխագիր կենաց, ապա զսուգն երանելի զարտաւսր, զաղբերն կենաց, զճշմարիտ խոնարհութիւն՝ զարմատն ամենայն բարեաց, եւ զհեզութիւն նորին համազոյգն, որովք ի մեծն եւ յառաջին պատուիրանն գալ կարացից՝ սիրել զՔեզ ի բոլոր անձնէ, եւ ի զաւրութենէ, եւ ի մտաց, եւ սիրովն Քո զբովանդակն պատուիրանս Քո պահել (տե՛ս Մատթ. ԻԲ 37, 40), զի կատարեսցի յիս այն, զոր ուսուցեր. «Որ սիրեն զԻս, զպատուիրանս Իմ պահեսցէ» (Յովհ. ԺԴ 21): Եւ զհամազոյգն սիրոյ Քո զարթո՛ եւ զաւրացո՛ յիս, Աստուա՛ծ իմ՝ սիրել զամենայն եղբայրս զհեռաւորս եւ զմերձաւորս, որպէս |323| զկենդանաշարժ անձն իմ զգալեաւս հանդերձ, եւ զերկիւղ Քո ամենասուրբ տուր ինձ՝ սարսել եւ դողալ ինձ ի Քէն հանապազ եւ առաջի աչաց միշտ զՔեզ տեսանել, որով սրովբէական երանութիւնն եւ ցնծութիւնն քաջալերական կատարեսցի յիս՝ ըստ մարգարէին: Ուստի գտայց ժուժկալ յամենայնի եւ անսբաղ հոգով զամենայն բարիս, զպարգեւս Հոգւոյդ Սրբոյ ժողովեցից յիս՝ լինել սուրբ սրտիւ խաղաղարար յիս եւ յամենեսին, ողորմած ամենեցուն, հալածական յաշխարհէ վասն անուանտ Քո, զամենայն բամբասանս եւ զհայհոյութիւնս եւ զչար զրպարտութիւնս, սուտս խնդութեամբ ընդունել վասն սիրոյդ Քո:

Լե՛ր աղ անհամութեանս իմոյ, հեռի արա՛ զիս յամենայն չարութենէ մեղաց՝ անչարախաւս, անծաղր|324|ածու, մտավարժ, խոհեմ, երկայնամիտ, լի հաւատովք, եւ յուսով, եւ սիրով, ողջամիտ եւ ողջախոհ ամենայնի, ճգնաւոր աղաւթասէր արթնականաց, ջերմ առաւել քան զհուր յամենայն բարիս, որով զագահութիւն, զինչս եւ զաշխարհ ամենայն ի բաց մերկացայց՝ զփառս, զմեծարանս, զպատիւս մարդկեղէնս, զբոլոր կերպարանս հին մարդոյն մեռեալ աշխարհի լինել, եւ կերպարանաւք Արարչիդ նորոգել ճշմարտութեամբ, այր կատարեալ ի չափ հասակի՝ ըստ իմացական հոգւոյ մեծութեան տնաւրինական մարդեղութեանդ Քո սուրբ, իմով անգաւր, տկար, մեղաւոր, ախտալից բնութեամբս գտանել ի վաղխճանի:

[Ո]ւթներորդ խնդրուածք իմ այս են, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ եւ Բժի՛շկ կեն|325|գանարար հոգոց եւ մարմնոց, զի որպէս խոնարհեցար ի հայրական ծոցոյ ի մեր բնութիւնս, եւ զմարդասէր եւ զամենակար բժշկարան կամաց Քոց բացեալ առողջութեամբ նորոգեցեր զապականեալ եւ զմահացեալ ծնունդս առաջին մարդոյն, նոյնպէս եւ այժմ, Տէ՛ր բարերար, զմեռեալ եւ զապականեալ մեղաւք բնութիւնս իմ զիմանալի եւ զգալի վերստին առեալ առողջ՝ նորոգեսցես մերձաւորութեամբ կամաց Քոց: Ոչ ի ձեռն անջան, սակաւ, փոքր, եւ անարի, եւ անգաւր ապաշխարութեան իմոյ, որով ոչ ունիմ ակն ողորմութիւն եւ թողութիւն գտանել ի Քէն, այլ շնորհաւք գթութեան աստուածային կամաց Քոց եւ յիս խոնարհել ողորմութեամբ, որպէս եւ յայնժամ յամենայն ախտաժէտս եւ հաւատովք իմովք ի Քեզ, զոր խնդրէիր ի նոցանէ: Կամքդ Քո միայն |326| բաւական է ինձ ի փրկութիւն եւ ի բժշկութիւն եւ կենդանութիւն մեռելութեանս իմոյ, զոր եւ ես համարձակիմ ասել ընդ սուրբ մարգարէին՝ «Զի՞նչ ապուտ է քեզ յարենէ իմ[մ]է, թէ իջանեմ ես [յ]ապականութիւն» (Սաղմ. ԻԹ 10):

Արդ, կամեաց, Տէ՛ր իմ, եւ բժկեցայց, եւ զպէս-պէս եւ զզանազան զբժշկութիւնս Քո

յիս յամենախտաժետս դարձո՛, Մարդասէր, եւ կատարեա՛: Եւ որպէս նախ զհող բնութիւն ջրոյ ի ջերմութիւն գինոյ փոխարկեցեր, եւ զիմ ցուրտ հովացեալ հոգիս շրջեա՛, Տէ՛ր իմ, ի ջերմ սէր աստուածային աւրինաց Քոց, եւ բորբոքեա՛ յապաշխարութիւն՝ ատել զբոլոր աշխարհս եւ այրել իբրեւ խռիւ զմեղս իմ: Եւ որ զփցուն, զճիւաղ շահասէր վաճառականսն խարազանաւ գանեալ արտաքսեցեր ի ծառայէ Քումմէ, |327| նոյնպէս եւ յիմմէ հոգոյս, զոր տաճար Քեզ անուանեցեր, մեծասաստ, աստուածային բարկութեամբ Քո արտամերժեա՛ զչար աւազակսն՝ զդեւս հարբն իւրեանց սատանայի է, որ միշտ փութան շահել յինէն գկորուստ իմ: Եւ զհատավաճառութիւն խորհրդոց նոցա, որ յիս են սեղանաւորեալ, ցրուեա՛, Տէր՝ կործանելով զնոսա, եւ զհեշտասէր բարս եւ զկամս նոցա, որ յիս են բազմացուցեալ: Խորտակեա՛, Տէր, եւ ընկեա՛ արտաքս, զի եւ ես արժանի եղէց լինել տուն աղաւթից, եւ Քեզ եւ Հաւր Քում բնակարան, եւ որ ոչ ի նիւթական տունս հանգչիս, այլ ի հեզս եւ ի խոնարհս եւ որ զողան ի բանից Քոց (Ես. ԿԶ 2):

Տո՛ւր ինձ, Տէ՛ր Աստուած իմ, զջուրն կենդանի, զի յիս ի սիրտ եւ ի հոգիս իմ լցեալ եւ բխեալ ի շրթունս իմ, զոր սամարուհոյն խոստացար՝ ասելով. |328| «Եթէ գիտէիր դու զպարգեւսն Աստուծոյ, «եւ ո՞վ է, որ խաւսիդ ընդ Քեզ, դու խնդրէիր ի նմանէ եւ տայր քեզ զջուրն կենդանի» (Յովհ. Դ 10): Ըստ որում տո՛ւր ինձ, Մարդասէ՛ր, որ խնդրեմս ի Քէն բոլորով սրտիւ իմով: Եւ զոր աւրինակ բացեր ի վերայ աշխարհի զամէնառատ, զամենազաւր, զամենագութ կամս քաղցրութեան Քո: Շրջելով Դու ինքնին ընդ ամենայն քաղաքս եւ ընդ գիւղս՝ քարոզէիր եւ ուսուցանէիր եւ ոչ մնայիր առ Քեզ ածել զհիւանդսն, այլ յիւրաքանչիւր տունս մտեալ բժկէիր զնեղեալսն ի պէս-պէս ցաւս եւ ի տանջանս, եւ զլուսնոտս եւ զդիւահարս: Սոյնպէս եւ առ իս, որ պաղատիմ առ Քեզ, ողորմա՛ծ եւ մարդասէ՛ր Տէր, ցո՛յց ինձ զանբաւ խոնարհութիւն Քո, որ տեսանեսդ յայտ յանդիման զվէրս, զցաւս, զհարուածս եւ զտանջ|329|անս իմ, եւ զդիւացն արձակումն միշտ, եւ փոյթ, եւ հանապազ, եւ արագ, քան զշրջանս փոփոխման լուսնի ի վերայ հոգոյ իմոյ: Եւ բժշկեա զայս ամենայն մինչդեռ ժամանակ է, եւ բաց է դուռն ողորմութեան Քո:

Դարձելոյս առ Քեզ ողորմեա՛, զցաւս ազգի ազգի չարչարանաց հոգւոյ իմոյ մաքրեա՛: Զամբարիշտ, զչարաթոյն դեւսն հալածեա՛ յինէն, զչար արկուածս խորհրդոց նոցա ըստ ժամանակի յիս կամ ըստ Քեզ ի հաւատս, ի նախախնամութիւնս Քո, ի պահս, յաղաւթս ի սէր սուրբ հովանացելով, եւ զեռանդն Հոգւոյդ Սրբոյ քաղ ելեալ յինէն, եւ երբեմն քնով դիւականաւ ըմբռնելով, եւ ցաւեցուցանելոյ զյաւգս մարմնոյս իմոյ բժշկեա՛, ողորմա՛ծ Տէր իմ եւ Աստուած: Եւ մի անգամ զեկեալն մի |330| այլ մի՛ թողուսցես՝ ասելով եւ սաստելով. «Ե՛լ ի դմանէ, եւ«ւ այլ մի՛ «եւս մտանիցես ի դա» (Մարկ. Թ 24): Ընդ բորոտեալսն զբորոտեալս հոգով սրբեա՛, զթա՛ծ Տէր իմ, եւ ասա՛ առ իս. «Կամիմ՝ սրբեաց յաւիտեան» (Մատթ. Ը 3): Որ ամենայնիդ ես, առ իս լեր եւ մի անկամ ելեալ, եւ բանիւ Քո ասա՛ առ իս. «Որպէս հաւատացերդ եղիցի՛ քեզ» (Մատթ. Ը 13): Ըստ այնմ ընդ որոյ զարմացար, Աստուա՛ծդ ամենագէտ, ընդ սարսուռ ջերմացելոյն ապաքինեա՛ եւ զտենտն դիւական յինէն, զի մեծ եւ կարաւղ զաւրութեամբ ի վեր յարուցեալ՝ իսկոյն յափշտակեցից զՔեզ եւ ընդ Քեզ շրջելով անմեկնելի սպասաւորեցից Քեզ եւ ոչ ի Գալիլեա Պաղեստին, այլ ի Վերինդ Երուսաղէմ եղէց ընդ Քէզ: Մի՛ ի Քէն ի բաց առաքեսցես զիս, այլ որպէս ընդ աշակերտսն Քո նաւակից լեր ընդ իս ի վերայ չար ալէտանջ ծովու աշխարհիս կենցաղոյս, եւ ամենարթուն, ամե-

նա|331|տես ակն Քո մի՛ բնաւ եւ մի՛ երբէք ննջեսցէ առ իս: Ուստի ոչ կարեն յառնել ալիք գիւականք, եւ աշխարհականք, եւ մարմնականք ի վերայ հոգոյ իմոյ եւ ընկղմել զմարմինս իմ: Եւ այնուհետեւ հանգարտեալ եւ սգաստացեալ հոգի իմ՝ նստելով առ յոտս Քո, եւ զլեգէհոնին չար բազմութիւն խոզաբուծիւքն հանդերձ, որ են անհաւատքն, ընկղմեսցին ի խորս ծովու կորստեանն յաւիտենից: Եւ որպէս զանդամալոյծսն, եւ զմիակողմանիսն, եւ զխեղսն, զկաղսն, զջրգողեալսն, զկորացեալսն յերկիր եւ զգաւսացեալսն բժշկեցեր, եւ յիս սքանչելագործեա՛, Փրկի՛չ իմ եւ Աստուա՛ծ:

Պնդեա՛ զլուծեալ յաւգս հոգոյ իմոյ ի յերկուց պատուիրանաց, զի Քոյին շնորհաւք զաւրացեալ հոգի իմ բարձցէ ի վեր զմահիճս իւր, որ է մարմինս պատճառ եւ տեղի ի վայր անկման: |332| Ասա՛ նախ առ իս, Ողորմած. «Որդեա՛կ, թողեալ լիցին քեզ մեղք քո» (հմմտ. Մարկ. Բ 9), զի եւ ես արժանի եղէց ընդ նմա՝ փառաւորել զաստուածութիւնդ Քո: Ուստի եւ երկու բնութիւնք, որ յիս, որ են երկու կողմանք աստուածային բժշկութեան Քո, ոչ եղիցին միակողմանի, այլ բովանդակն կատարեալ առողջութեամբ, որով միաբանութեամբ բառնայցես յինէն Ողորմած՝ զխեղութիւն ի բարիս, զկաղութիւն ի սէր, ի հաւատս, ի յոյս եւ [յ]այլ առաքինութիւնս, զի եւ զէճ, եւ պեղծ, ողողիչ, անյագ, աղտեղի խորհուրդք ցամաքեսցին ամենեւին զորութիւնք Քո, որով կանգնեալ եղէց հրեշտակային եւ երկնային մաքրութեամբ եւ մի՛ կորացեալ ի սատանայէ: Եւ ձեռք իմ իմանալիք եւ սգալիք ոչ գաւս, այլ պարզ եւ գիւրաշարժ, թեւաւորեալք առ Քեզ եղիցին: Նոյնպէս առ պէտս եղբարց տարածեալ եւ յամենայն գործս բարիս, զի եւ ես գտայց փառաբանիչ Տեառնդ եւ Աստուծոյ Իսրայէլի Նորոյ, որ զաւրութեամբ աստուածութեանդ Քո, |333| ազդեալ ի գարշարգանդ տեառատեսին, արբեցեր, ցամաքեցուցեր զաղբեւր արեան նորա, ըստ նմին եւ զպոռնիկսն, որ կամաւք հեղուին զարիւն պղծութեան մեղաց: Նորոգապէս աստուածային իշխանութեամբ թողեր զմեղսն, սրբեցեր զոգիս նոցա մարմնով հանդերձ: Եւ զիմ ոգի եւ զմարմին բժշկեա՛, Մարդասէ՛ր, յարիւնաթոր հոսմանց, զէճ պղծութեանց կամաւորաց եւ ակամայից, ասա եւ ինձ, Ողորմա՛ծ. «Հաւատք քո կեցուցի՛ զքեզ, ե՛րթ ի խաղաղութիւն» (Ղուկ. Ը 48): Որ զկոյրսն լուսաւորեցեր, զխլից զականջնսն բացեր, զհամերսն ի յիստակ խաւսս արարեր, զայսր պատճառ զբանսարկուն տանջանաւք կապեցեր:

Եւ զիմ մեղաւորի զաչս հոգւոյ զխցեալս մեղաւք եւ աշխարհի զբաղմամբք յորովայնէ բաց, Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ, զի հայեցայց հաստատուն իմացականապէս ի լոյս Արեգականդ արդարութեանդ, |334| եւ տեսից զանբաւ զխորհուրդ եւ միտս պատուիրանաց Քոց: Եւ զյուսացեալ երանութիւնն, որ կայ պահի յուսացելոց Քոց: Եւ զի ծնէ զխաւար թանձրամած խորհրդոյ եւ զբաղանաց աշխարհիս թունաւք, աստուածային եւ արարչական զաւրութեամբ Քո, ի բաց խլեա յինէն, զի լուսով Քոյոյ շնորհիտ տեսից զՔեզ Աստուած, եւ բաց ականջաւք հոգւոյ իմոյ լուայց զբանս Քո, եւ ես լուայց ի Քէն, թէ՝ «Զոր տեսեր՝ Նա է Որդին Աստուծոյ», եւ թէ՝«Ըստ հաւատոց քոց եղիցի քեզ»: Ըստ այնմիկ զնոր եռանդն Հոգւոյդ Սրբոյ արկ ի հոգի իմ որպէս յաշակերտսն Քո, որով արբեալ կոխեցից զմրուր աշխարհիս, եւ երկումք շնորհաւք եւ հոգով իմով պահեալ եղիցի ի Քէն: Եւ չար ժողով գիւացն բազմութիւն, որ զսնոտի պահս զնեն առաջի իմ, եւ կամ զարտաքին սրբութիւն մարմնոյ եւ ձեռաց, որ ոչ են տնկեալ ի Հաւրէ Քումմէ, ի բաց խլեսցին, |335| զի մի՛ բնաւ ի ներքուստ անմաքրութիւն եղիցի յիս, որով պղծին մարդիկք: Այլ զանձ բարեաց բղխեսցէ

ի սրտէ իմմէ հանապազ ըստ ամենայն շարժմանց, որով զՔեզ միշտ ամէնաւրհնեալ Տէր իմ փառաւորեցից, որ եղեր ի Հաւրէ Անմեկնելիս, եւ եկիր ի ծառայի կերպարանս անփոփոխ եւ անհաս Բնութիւն, եւ սերմանեցեր զկենդանարար զբանս Քո յանդաստանս բնակարան սրտից:

Լո՛ւր պաղատանաց իմոց, եւ արա՛ զիս բաւանդակ բարի երկիր տոհմականս պտղաբերութեամբ հատուցանել Քեզ՝ ըստ յաւժարութեան մտաւոր հոգւոյս իմոյ հարիւրաւոր, իսկ խորհրդովք իմովք եւ զգայարանաւք՝ վաթսնաւոր, իսկ ըստ կարի տկար եւ դանդաղ մարմնոյս իմոյ՝ երեսնաւոր: Վասն որոյ եւ չարագիւտ չար մշակն, որ ոմանց մի՛ երբէք ի քուն գտեալ զիս, զչար որոմն ի գրոյ սերմանն կարիցէ սերմանել յիս: |336| Այլ ատոք ցորեան եղէց արքայութեան Քո, զոր ի հունծս ի կատարածի ի շտեմարանս Քո ժողովեա՛, Մարգասէ՛ր, զի եւ ես արժանի գտայց ողորմած ի մէջ արդարոցն՝ փայլել իբրեւ զարեգակն յարքայութեան Քում: Ուստի եւ այժմու կեանս խորհուրդ խմորոյն կենաց, որ միաւորեն զիս եւ խառնէ ընդ Քեզ, կատարեսցի յիս, ընդ նմին եւ մանանեխն, որ է նշանակ հաւատոյ եւ զաւրութեան աստուածութեանդ Քո: Ողորմութեամբ Քո սերմանեալն յիս աճիցէ, եւ եղիցի ծառ կենաց ոչ միայն մարդկան եւ արդարոց հովանի, այլեւ բիւրաւոր եւ անմարմին, թեւաւոր հրեշտակաց Քոց հանգիստ, զի եւ ես ընդ նոսա անդադար փառաւորեցից զՔեզ, Աստուա՛ծ իմ եւ Տէ՛ր: Եւ այսու կարացից զաւրութեամբ ստանալ զագարակն՝ զփոքրն, զնեղն եւ զանծուկ վայրն, ուր կայ ծածկեալ անբաւ, անչափ գանձ մեծութեան արքայութեան |337| փառաց Քոց ի վեր յերկինս՝ յ[ը]նդարձակ եւ յանչափ ի քաղաքն, որ է Վերինն յԵրուսաղէմ, որ է սիրով եւ եռանդնոտ փութով թողեալ, մանաւանդ թէ տուեալ զիմ ի Քէն յերկրի ստացայց զլուսաւոր մարգարիտն պայծառ յերկինս, որ զնի եւ փայլէ ի թագի Քում, Աստուա՛ծդ մարգացեալ, որպէս զլուխ մարմնոյ Եկեղեցւոյ Քում, եւ ամենայն ի սպիտակ փայլուն հոգիք ի զարդ թագի Քում միաւորին ի փառսն Քում արքայութեանդ, որպէս խոստացար կամիս, «զի եղիցին մի՛ որպէս դու Հայր յիս, «եւ ես ի Քեզ, զի ե«ւ նոքա ի մեզ իցեն» (Յովհ. ԺԷ 21):

Եւ խորհուրդ ուղղանի Քո լցցի յիս, զի այսու զաւրութեամբ եւ շնորհաւք ըստ երկուց մարդոց յիս բարի, բարի գտեալ հաւատովք եւ գործովք ի յամանս կենաց Քոց անլուծանելի փառաց Քոց հաւաքեցայց: Յորժամ նստիս յաթոռ փառաց եւ ժողովես զՔոյսն ընդ Քեզ, որք եւ |338| յերկրի մեծատուն տանուտեարք են ի Քէն, զանբաւ գանձս հին եւ նոր աւրինաց Քոց ժողովեցին յոգիս իւրեանց:

Թեթեւացո՛ զիս, Տէ՛ր Աստուած իմ, գնալ անթաց ոտիւք ի վերայ ծովու մեղաց կենցաղոյս այսորիկ, որպէս զՊետրոսն ի վերայ ջուրցն ծովուն: Եւ տո՛ւր ինձ զամենազաւր ձեռն Քո հանապազ, զի մի՛ լուայց ի Քէն. «Թերահաւա՛տ[4], ընդէ՞ր երկմտեցեր» (Մատթ. ԺԴ 31), այլ զմիւսն արժանի եղէց լսել. «Մեծ են հաւատք քո. եղիցի՛ Քեզ՝ որպէս «եւ կամիս» (Մատթ. ԺԵ 28): Եւ զիջեալս յերկրաւոր խաղաղութեան նէտ յերկիր դատապարտեալ, ուստի եւ անկեալ ի ձեռս աւազակաց՝ կապուտ կողոպուտ եղեալ, մերկ գտնեալ եւ կիսամահ:

Տեսող ողորմութեամբ Քո երկայնամիտ, եւ քաղցր, եւ մարդասէր, պատեա՛ զվէրս իմ, զի մի՛ դարձեալ չար աւազակն կարիցէ հարկանել զիս: Ա՛րկ ի վերայ իմ զիւղն աստուածա-

4 Բնագրում՝ թերէհաւապ:

բար՝ |339| զշնորհս Սուրբ Հոգւոյդ Քո որդէգրութեան, եւ զբաժակն կենդանարար մարմնոյ եւ արեան Քո տուր ինձ: Որով ամրացեալ եղիցի գաղտնի նետից բանսարկուին՝ կալով միշտ Եկեղեցւոյ Քո, հաստատեալ երկու պատուիրանաւք, որ ունին զնկարագիր պատկերի Քո՝ կատարեալ սէրն Քո եւ կենդանարար յիս եւ ամենայն մարդկան, մինչեւ ի միւսանգամ գալուստ Քո:

Եւ զիս, որ անիրաւ գտայ յիսպասաւորութիւն տնտեսութեան Քո, իմաստացո, բարեսէ՛ր Տէր իմ, այնքան, զի ի Քէն գովութեան արժանի եղէց յերկրորդումն բարեգործութեան: Եւ արժանի արա զիս հատուցանել ի վաղխճանի զխորհուրդ երից նկանակացն առաջի Քո, մի՛ դանդաղանաւք ի գիշերի եւ յանկողնի, այլ կանգուն եւ յարթուն գաւտի ընդ մէջ, եւ լոյսդ աննուազ առաջի իմ եւ յիս: Զի յորժամ գայցես եւ բախիցես վաղվաղակի, |340| բանայցեմ Քեզ՝ կատարեալ գոլով յամենայն հրամանս Քո, որով երանութեանց արժանի գտայց ի Քէն, Աստուա՛ծ իմ, ասելով. «Երանի՛ ծառայիտ իմոյ, զի գտի զքեզ արարեալ այսպէս», որով անբաւ մեծութեան Քում մասնաւորեսցես զիս, առա՛տ Տէր իմ:

Տո՛ւր ինձ, որ խնդրեմս ի Քէն, Աստուա՛ծ իմ, կատարեալ, անթերի գտանել յաշակերտութեան Քում, լինել աշտարակ ամուր, հզաւր եւ անառիկ՝ ընդդէմ ամենայն հակառակամարտ պատերազմողաց մարմնոյ, եւ աշխարհի, եւ խաւարագնաց անաւրէն բանսարկուին: Ուստի եւ ի պատերազմիս յայսմիկ զաւրութեամբ Քո, Փրկի՛չ, յաղթող երեւեցայց ի վերայ պատերազմասէր չարութեան նորա: Եւ կատարեցից զապստամբ զայրս նորա ի Քէն, եւ գտայց զաւուրս կենաց իմոց՝ խոժոռ գիմաւք եւ անպակաս ոխակալութեամբ ի տուէ եւ ի գիշերի ճակատել |341| ընդէմ նորա: Եւ մի՛ կարասցէ չարագործ խաբողն առնուլ մասն ինչ յինէն ի կողմ իւր:

Այո՛, խնդրուածք իմ ի Քէն, Փրկի՛չ իմ, զզարձումն անառակ որդոյն, որոյ ես հանգոյն գտայ, կատարեա՛ յիս, բարերա՛ր Տէր իմ:

Լո՛ւր զձայն գոչողիս առ Քեզ ի սրտէ իմմէ. «Հա՛յր, մեղա՛յ յերկինս «եւ առաջի Քո, չեմ արժանի կոչել որդի քո» (Ղուկ. ԺԵ 18-19), եկ ընդ յառաջ իմ Գթած, գիրկս ած, Ողորմա՛ծ:

Տո՛ւր զկենդանարար ողջոյն Քո ինձ՝ մեղաւորիս, զարդարեա՛ զիս առաջին փառաւքն առ ի Քէն պատմուճանաւն, մատանեաւն եւ կոշկաւք, զի արքունական էր եղեալ, ահաւոր երեւեցայց չարասէր բանսարկուին կողմանն, ի տաւնական ուրախութիւն ած զհրեշտակս եւ զսուրբս առհասարակ:

Բա՛ց ինձ զՍուրբ Եկեղեցի Քո, հաղո՛րդ արա զիս ամենասուրբ եղին |342| պատարագի: Ասա՛ որպէս բազմաց եւ ինձ, Մարդասէ՛ր. «Որդիս իմ գտաւ ի կորստեանէ «եւ եկաց ի մեռելութենէ յարուցեալ կենդանի» (հմմտ. Ղուկ. ԺԵ 24, 32):

Պարգեւեա՛ ինձ զժուժկալութիւնն Ղազարու ի կեանս այսոսիկ, զի համբերութեամբ փոխեցայց ի գոգն Աբրահամու՝ հաւրն հաւատոց, եւ լուայց ի համառաւտ ընտրութեանն. «Սա ընկալաւ զչարիս իւր ի կեանս իւր «եւ աստ հանգչի» (հմմտ. Ղուկ. ԺԶ 25): Զկոչեցեալս ի Քէն ի հարսանիս Քո անմահութեան կենաց Քոց եւ զմերկացեալս ի հնութենէ ապականութեան զառաջինն շնորհաւք Քո, որ զգեցուցեր ինձ զլոյս փառաց Քոց, զոր աղտով մեղաց իմոց այլափոխեցի: Եւ զարձեալ յուսով անյիշաչարութեան Քո մերկացայ զայն ի ձեռն խոստովանութեան:

Շնորհեա՛ ինձ, Ողոր|343|մա՛ծ, պայծառազգեստ լինել եւ այնպէս կալ առաջի Քո, եւ

մտանել յամենասուրբ հարսանիս բազմականի Քո ընդ անթիւ բազմեալսն առաջի Քո լուսապայծառ փառաւք, ընդ իմաստուն հինկ կուսանացն՝ առատ իւղով ջահավառ:

Շնորհեա՛ ինձ լինել ամենասուրբ փեսայտ իմ ի հարսանիս Քո, զի ընդ գալուստ Քո ցնծացեալ՝ մտից իսկոյն ընդ Քեզ յառագաստ Քո, եւ աւրհնեցից անհատ ձայնիւ զՓեսայտ անմահ՝ ի բաշխումն շնորհաց թագաւորական տաղանդացն առ ի Քէն: Թէպէտ եւ հնկին չեղէ արժանի, յերկուցն մի՛ զրկեր, Տէ՛ր Աստուած իմ եւ Թագաւո՛ր իմ, արժանի արա զիս առատ արկանել զայն ի Սեղան Քո Սուրբ եւ շահել կրկին զառողացն եւ զիմ փրկութիւն եւ լսել ի Քէն. |344| «Ազնի՛ւ ծառայ, բարի «եւ հաւատարիմ. ի սակաւուտ հաւատարիմ գտար, ի վերայ բազմաց կացուցից զքեզ, մո՛ւտ յուրախութիւն տեառն քո» (Մատթ. ԻԵ 23): Եւ յորժամ գայցես թագաւորութեամբդ Քո ի փառս Հաւր Քո, եւ ամենայն բաժանմունք աստիճանաց յերկուս դասս բովանդակին, զոր կացուցես քեզ յանդիման յաջմէ Քումմէ եւ յահեկէ՝ ի պատժել եւ ի փառաւորել զամենեսեան: Յայնժամ, ողորմա՛ծ եւ քա՛ղցր Թագաւոր, ի դասու եւ ի մասին աւրհնելոցն ի Քէն կարգեա զիս:

Եւ տո՛ւր ինձ սիրտս, եւ բաց աստուածական աջովտ զակա[ն]ջս հոգոյ իմոյ լսել ի Քէն զայսոսիկ այժմ, եւ արժանի՛ արա զիս կատարել ըստ բոլոր գաւրութեան իմոյ, կարողութեան իմոյ զմարգասիրականսն՝ զպատուիրանսն ի Քէն՝ առ ի կարաւտեալ եղբայրս Քո ընդ հոգւոյ եւ մարմնոյ, զի գտայց |345| ի Քէն արժանի կենացն յաւիտենականաց, որ զքաղցեալ բիւրս կերակրեցեր յանապատին, եւ խոստացար տալ խնդրողացն ի Քէն զհաց կենդանի եւ կենդանարար իջեալ յերկնից վասն կենաց սովահիւծեալ մարդկան:

Տո՛ւր եւ ինձ խնդրողիս ի Քէն ի բոլոր սրտէ իմմէ եւ արժանացո զիս, առատապարգեւ՛ Տէր իմ, հացիտ կենաց հաղորդիլ, զոր ողորմած Հայր Քո եւ բազմագութ զմանանայդ կենաց՝ զհացդ անմահութեան, միշտ բաշխէ ի կեանս աշխարհի, որպէս զի առեալ իմ ի Քէն զհացդ երկնաւոր՝ զովաւ Դու յիս բնակեցեր, եւ ես ի Քեզ, որով եւ ես՝ մեղաւորս, կեցից վասն Քո՝ ըստ աստուածային անսուտ բանի խոստման Քո: Նաեւ խորհուրդ աւրհնեալ նկանակացն ըստ աճման եւ երկու ձկանցն եւ թուեալ կերողացն կատարեսցի յիս, |346| սքանչելագործ Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ, որպէս զի հինկ նիւթականք, որ յիս, ըստ աւրհնութեան հրամանի Քո, լիցի կելոյ պատճառ՝ ըստ մասն հնկի մշտաշարժ իմացականին, որ յիս:

Եւ չորս տարրանքն ունակութիւնք, որ յիս, աւրհնութեամբ ամենասուրբ ձեռաց Քոց առաջի Հաւր Քո եղիցի նպաստ՝ ըստ աճման աւրհնութեան Քո ի բարիս եւթնարփի հգաբաւոր շնորհաց Հոգւոյդ Սրբոյ: Որ ի պարզ եւ յանմարմին գոյութիւն կատարեալ հոգւոյ իմոյ, որով միագուգեալ երկոքին արտաքին եւ ներքին, ի խորոց զաւղակ ընկղմել ի ծովէն արտաքս ելեալ, եւ կենդանախ[ա]րուկեալ յաստուածային հրով Քոյոյ սիրոյդ եկեսցեն զոյդ ի յաստուածական ձեռս Քո, զոր աւրհնեսցես յաճումն անժամանակ առաջի Քո, Աստուա՛ծ իմ: Որ զմեռեալս յարուցեր ըստ կարգի յառաւելութիւն մինչ ի չորեք|347|աւրեայն, եւ զիս՝ զմեռեալս մեղաւք, միանգամայն կենդանացո, Տէ՛ր Աստուած իմ:

Եւ յարո՛, կանգնեա՛ ի մեռելոց, որ յարութիւն եւ կեանքդ ես աշխարհի, զմեծն եւ սքանչելին ներգործեա՛ յիս զթութեամբ, զի զայն եւ մարգարէքն, եւ առաքեալքն, եւ այլ սուրբք արարին: Իսկ ի մեռելութենէ մեղաց յարուցանել եւ զմեղս թողուլ միայն Սուրբ Երրորդութեանդ է կամք եւ իշխանութիւն: Վասն որոյ աղաչեմ զԱզատիչդ ի մեղաց, զի եւ զիմ ոգիս ազատեալ ի մեղաց սրբեսցես աստուածային իշխանութեամբդ եւ լուսաւորեսցես

առ ի Քէն լուսովդ՝ որպէս եւ զաշակերտսն Քո ի Թաբաւրական լերինն: Զի եւ ես յերկրորդումն ծագման Քոյոյ փառացդ լուսով Քո հայեցայց ի լոյս երեսաց Քոց զէմ յանդիման, որով պայծառութեամբ լցեալ յագեցայց յերեւել փառաց Քոց:

Որ ի վերայ անբանից նստար Թագաւորդ հեզ եւ /348/ խոնարհ եւ մտեր յԵրուսաղէմ, բարեբանեալ երկնաւոր աւրհնութեամբ յաւրինակ մեծի խորհրդոյ փրկեալ եւ լուսաւոր Եկեղեցւոյ Քո, եւ յիմ խնդրողիս վերայ ի հոգւոջ իմում բազմեալ հանգիցես, Տէ՛ր եւ Աստուա՛ծ իմ: Զոր կոչեցեր յանբաւութենէ կապանաց, արձակեցեր եւ առ Քեզ առեալ լուսաւորեցեր: Եւ վեր արկեալ զգեստաւորեցեր լուսով Քո, զի եւ ես արժանի եղէց ընդ աշակերտաց Քոց յերկրորդումն ի դասս նոցա միաւորել եւ գոչել համարձակս. «Սուրբ աւրհնեալդ յանուն Տեառն, Թագաւորդ երկնից եւ երկրի»: Որ եւ ընդ նոցա այժմէն առեալ զիս հանցես զիս արժանապէս ի սուրբ Վերնատունն աստուածային խորհրդոյ Քո, հաղորդեցուսցես յամենասուրբ եւ ի սրբարար մարմին եւ յարիւն Քո, որովք ի Քեզ միացեալ յաստուածաբնակ Վերնատունդ՝ /349/ յերկինս եւ ի դասս յանմարմնոց փոխեցայց, որպէս եւ ամենայն սիրելի աշակերտքն Քո:

Գլուխ եւ աւարտ խնդրուածաց իմոց այս են, Տէ՛ր Աստուած իմ, որ խաչեցար եւ թաղեցար վասն մերոյ փրկութեան, արժանի՛ արա եւ զիս՝ զտրուպս, խաչակից լինել Քեզ, զերեզմանակից, որովք ընդ Քեզ յարեայց՝ ըստ նմանութեան յարութեան Քո, կերպարանակից առնել Քեզ զմարմին խոնարհութեան իմոյ նուաստութեանս ի ճշմարիտ, ի պարզ եւ յանյաւթ բնութիւն փառաց յարութեան Քո, զի բեկոտ խեցեղէն յաւգապատ ծանրութիւն դանդաղ եւ տաղտկալի մարմնոյս ի հող մնացեալ՝ թեթեւացայց հոգւով առ ի ծածկել, զի վերոյ զմարմինս իմ, զի ընկղմեսցի մահկանացուս ի կենաց անտի: Եւ այնպէս յարուցեալ փառաւք թեթեւացայց ճախրելով՝ աւդագնաց եղեալ ընդ յառաջ Քո /350/ համարձակ երեսաւք ի հանդիպումն Քո, զի ընդ սուրբս Քո արժանի եղէց աղաղակել ձայնիւ մեծաւ:

Ցնծացէ՛ք, ամենայն յաւիտեանք:

Ցնծացէ՛ք, երկինք եւ երկիր եւ ամենայն արարածք:

Ցնծացէ՛ք, դասք անմարմնոց եւ ամենայն արդարոց, զի «Տէր Աստուած մեր երեւեցաւ մեզ» (Սաղմ. ՃԺԷ 27):

Տաւնեցէ՛ք յարազուարճ մշտնջենաւոր ուրախութեամբ, զի դատեցաւ տէր զդատաստան իւր, էառ ըստ արժանի զվրէժ ի թշնամոյն մերոյ, եւ փրկեաց զմեզ յամենայն նեղութեանց մերոց. յայսմհետէ ցնծասցուք եւ ուրախ լերուք ի Տէր Աստուած մեր:

Իններորդ խնդրուածք իմ այս են առաջի Քո, գթա՛ծ Տէր Աստուած իմ, զի այսու ամենայնիւ, զոր խնդրեցի ի Քէն, նովին զաւրութեամբ եւ սքանչելեաւք, զոր ներգործեցեր ի մարդիկք, պահեսցես զիս անցաւս ըստ մարմնոյ սրբեալ եւ առողջացեալ ի Քէն, մինչեւ յաւր /351/ վաղխճանի իմոյ: Եւ յորժամ եկեսցէ աւրն այն եւ ժամ, հերքեալ կործանեսցես յինէն զչար, զամբարիշտ եւ զանաւրէն թշնամին, զի մի՛ կարասցէ ամենեւին մաւտել առ իս: Ի բացէ ի բաց հալածեա զնա ի ծառայէս Քումմէ, զոր ստացար կենդանարար արեամբդ Քո, կործանեալ եւ հեռացեալ եղիցի յինէն ապստամբն՝ ամենակարաւղ զաւրութեամբ խաչի Քո եւ ի ժամուն յայնմիկ խնդրեմ ի Քէն, Աստուա՛ծ գթութեանց եւ Տէ՛ր ողորմութեանց, մի՛ յիշէր զմեղս իմ զհոգեկանս եւ զմարմնականս, եւ մի՛ սրտմութեամբ Քո յանդիմաներ զիս, եւ մի՛ բարկութեամբ Քո խրատեր զիս: Եւ մի՛ առաքեր խստիւ զբարի, զմարդասէր, զաստո-

ւածասէր հրեշտակ Քո խստիւ եւ անողորմ ի վերայ իմ՝ յանխնայ տանջանաւք անջատել զհոգիս ի մարմնոյս, եւ սոսկալի բռնութեամբ քակտել զյաւդս միաւորեալս, որ յիս: |352| Այլ, քաղցր Տէր իմ, ողորմութեամբ եւ քաղցրութեամբ հայեա՛ յիս ի ժամուն յայնմիկ: Նոյնպէս եւ հրեշտակք Քո բարի ուրախութեամբ եւ զուարճութեամբ բերկրանաւք գթաւրէն բարեկամապէս կոչեսցէ զիս առաջի Քո աւետեաւք քաղցրութեամբ: Եւ հրաժարէ հոգիս յաշխարհէ յայսմանէ յաւիտեան:

Հեշտեա՛ անցաւ, անտրտում որոշեա՛ զաւրութեամբ Քո ի մարմնոյս իմոյ որպէս զամենայն սիրելեացն Քո, զի եւ ես, որ ոչ մահու չափ սիրեցի զՔեզ, որպէս Դու՝ զիս, եւ նոքա՝ զՔեզ: Այլ միայն զճշմարիտ հաւատս Քո, զոր ետուր ինձ, բարեխաւս ունիմք առ Քեզ, եւ զամենասուրբ, զաստուածարար մարմին Քո եւ զարիւն, զոր խառնեցեր յիս: Վասն սոցա լուր ինձ, Աստուած իմ, եւ կատարեա՛ զխնդրուածս իմ զամենայն:

Տասներորդ խնդրուածք իմ այս են, Տէ՛ր Աստուած իմ, յորժամ ան|353|ջատեալ մեկնեսցի անմահ եւ իմանալի հոգիս իմ, զոր նմանութիւն եւ կերպարան Քեզ անուանեցեր, ի յանցաւոր եւ ի մահկանացու մարմնոյս եւ զէմ եղեալ սոսկալի սարսռմամբ ի յուղի անկանել ի ձեռն հրեշտակի Քո հրամանաւ Քո, զանբաւ երկայնութիւն խլեր ճանապարհին, հատանել, անցանել մինչեւ ի նոյնագոյ բնութիւնն, յորմէ ստեղծեալ ի Քէն եկն ի մարմին: Յայնժամ, բարերա՛ր Աստուած, լուր պաղատանց խնդրողիս ի Քէն զողորմութիւն այժմ, զոր արդ պարգեւեսցես ինձ, հեռացո՛ յինէն զսկզբնաչար մարդասպան բանսարկուն, որ կատաղի եւ դառն իշխանաւք եւ պետաւք իւրովք, որ ունի զիշխանութիւն բնակութեան ներքին կենդանախառն աւդոյս այսորիկ մինչեւ ի յամպս, քանզի ի վերայ ամպոց ոչ ունի իշխանութիւն ամենաչար անաւրէնն, |354| զի Դու ողորմեալ մեզ ընկեցեր անտի ի խոնարհ՝ ասելով մեզ յայտնի. «Տեսանէի զսատանայ, զի անկեալ յերկնից իբր:եւ զփայլակն» (Ղուկ. Ժ 18):

Արդ, թէպէտ եւ ես անհամարձակ եմ խնդրել զայս ի Քէն, բայց հաւատամ եւ հաստատեալ գիտեմ զքաղցրութիւն Քո, զի տաս առատաբար, որ այժմ հաւատով խնդրեն ի Քէն զբարիս:

Տո՛ւր ինձ, Աստուա՛ծ իմ, եւ մի՛ արգելուր յինէն, ամենակեցո՛յց Տէր իմ, վասն զի նա սովոր է ոսն հարկանելու, խրոխտալ եւ տրոփել յիւրոցն վերայ՝ գիտելով զնոսա գեհենակիցս եւ կորստակիցս ինքեան ի յաւիտենական մահս, որ է կորուստ եւ տանջանք, իսկ Քոյոցն վերայ արձակի կատաղի անամաւթն եւ ջանայ լրբաբար խածատել իբրեւ զգազան չար եւ տանջել, զատամունսն կրճելով դատախազ լինի, համարս պահանջէ, |355| դատաստան վարէ, բիծս եւ չարիս կարկատէ, մատնէ, պարախաւսէ առաջի Քո: Եւ զգթութիւն ողորմութեան Քո ըստ ապաշխարութեան մեղաց հետն կամեսցի դարձուցանել:

Իսկ արդ, Տէ՛ր բարերար, զՔոյս մի՛ տար յայնժամ ի ձեռն նորա, թէպէտ եւ բազմամեղ եմ, սակայն առաջի Քո եւ առ Քեզ են մեղք իմ, զոր ապաշխարեցի, ոչ գիտեմ բնութեան ըստ արժանոյ կամ ընդունելի եղեն Քեզ, այլ ի նա չեմ հարեալ յամենաչարն եւ հրաժարեալ եմ ի նմանէ ի մանկութենէ իմմէ եւ յորմէ հետէ ծնայ ի Սուրբ Աւազանէն:

Մեղայ անչափ, որպէս եւ Դու գիտակդ ես, բայց Քեզ Տեառն բարերարիս մեղայ, եւ ամաւթով եւ պատկառանաւք կայի առաջի Քո զաւուրս իմ, որում Դու ես վկայ եւ ոչ այլ ոք: Վասն որոյ Դու խրատեա՛, եւ յանդիմանեա՛, եւ տանջեա՛ զիս ողորմութեամբ Քո, |356| եւ մի՛ ի ձեռս չարին մատնէր զՔո ծառայս:

Արդ, յիմում ճանապարհին մի՛ տար տեսանել զիս չարին ամենեւին, այլ ողորմութեամբ Քո, Տէ՛ր, յիս կափուցեալ կուրասցին աչք նորա, եւ յիմարեալ խցցին լսելիք նորա, եւ համրացեալ կարկեսցի բերան նորա, եւ պարաւանդեալ կապեսցին ոտք նորա, եւ ջղատեալ արգելցին արշաւանք նորա, եւ ամենայն չար սպասաւորք եւ գործակիցք նորա, որ առ նովաւ, տագնապեալ տանջեսցին՝ ըստ արժանեաց իւրեանց անաւրէնութեանն:

Եւ ես՝ անարժան ծառայս Քո, խաղաղութեամբ անցից զճանապարհս իմ վերակացութեամբ հրեշտակի Քո, որ կոչէ զիս, զի արժանի եղէց ցնծութեամբ երկիր պագանել սուրբ ճառագայթից Քոց եւ անտրտում ուրախութեամբ կալ եւ անդադար, անբարբառ[5] աւրհնութեամբ ի մէջ սուրբ ոգոցն աւրհնել զՔեզ մինչեւ ի միւսան|357|գամ գալուստ Քո:

Եւ ի կատարման խնդրական աղաւթից իմոց զնոյն աղաչեմ վասն ամենայն եղբարց բարեաց, որք զինքեանս յանձնեալ ինձ՝ մեղաւորիս, կամ խնամեալ իմում պանտխտութեանս, խնայեա՛ եւ ողորմեա՛ նոցա ամենեցուն: Եթէ ապաշխարողք իցեն, տո՛ւր նոցա զաւրութիւն յաղթել սատանայի, եւ ապաշխարութեամբ սրբեալ ի մեղաց եւ Քեզ հաճոյ եղեալ այնպէս եկեսցեն առ Քեզ: Իսկ եթէ արդարք, զի առաւել զաւրասցին ի սէր Քո եւ ի պահպանութիւն պատուիրանաց Քոց, եւ համապատիւք եղիցին սրբոց Քոց ի վաղխճանի իւրեանց:

Նոյնպէս եւ ամենայն ուղղադաւան հաւատացելոց, որ ընդ ամենայն տիեզերս են, տո՛ւր նոցա, Տէ՛ր Աստուած, ողորմութիւն Քո: Այժմ, մինչդեռ ժամանակս ի ձեռս է, բաց զաչս սրտից նոցա՝ հայել ի Քեզ երկիւղիւ Քո, հեռանալ եւ ատել զչարասէր աշխարհս |358| եւ մի՛ մեծ վարկանել զունայնութեանս՝ կեանս ըստ մարմնոյ փութոյ մեծանալոյ եւ հանգստեան պարապման: Այլ ի պատուիրանս Քո փութալ միշտ, մի՛ թողուր զմեզ ի կամս մեր, Տէ՛ր Աստուած, այլ ըմբռնմամբ ձգեսցես առ Քեզ՝ տալով կեանս, եւ ողորմութիւն մեզ ամենեցուն ի վաղխճանի՝ ի փառս եւ ի գովեստ անուան Քում Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Եւ ես՝ մեղաւորս, այսուհետեւ փոխեցայց ի պահպանական աղաւթս առաջի Քո:

Տէ՛ր Աստուած, ամենափրկիչ եւ խնամակալ, այժմ հայցեմ զսուրբ մարգարէին ի Քէն, մի՛ ընկենուր զծառայս Քո ի բարձրութենէ բարեաց, ժուժկալ եւ առաքինի կենաց ըստ կարի: Ի ժամանակի ծերութեան իմոյ եւ ի պակասել զաւրութեան իմոյ մի՛ թողուր զիս, այլ զաւրութեամբ Քո զաւրացո՛ զիս, եւ զպահպանիչ Հոգիս Քո, Տէ՛ր, մի՛ |359| երբէք հեռացուցանէր յինէն յամենայն աւուրս իմ, որ յառաջի կայ, Տէ՛ր իմ եւ Աստուած, Հոգի՛ս Սուրբ, Դո՛ւ լեր պահապան կենաց իմոց՝ որպէս եւ յամենայն յուսացելոց ի Քեզ յիւրաքանչիւր ժամանակի: Գիտեմ եւ խոստովանիմ զչնորհս Քո, որ յիս, զի ի մանկութենէ իմմէ բազում անգամ խնամակալեցեր ինձ, թէպէտ եւ ես բիւրապատիկ կորուսի զանձն իմ ընկղմիչ մեղաւք, սակայն երկայնամտեցեր, Ողորմա՛ծ, մինչեւ դարձայց առ Տէր իմ եւ Աստուած:

Եւ արդ, Աստուա՛ծ ճշմարիտ, Հոգի՛ս Սուրբ, այժմ առաւել զաւրացո զպահպանութիւն Քո յիս, զի մի՛ ի ծերութեանն եւ ի տկարութեան հետք չարին գացի ի խորհուրդս, ի բանս եւ ի գործս իմ, զի այժմ, թէ անցանեմ անագան, դժուարաւ կարեմ գտանել զթողութիւն ի Քէն: Եւ կամ բնաւ թէ իշխեմ ժտել առաջի Քո եւ խնդրել զթողութիւն ծերութեան անցանաց, |360| որ յայտնի իսկ է, բիւրապատիկ ծանր լինել ծերութեան անցանք եւ ի Քէն

5 Բնագրում՝ անբառբառ:

թողութիւն: Վասն որոյ պահեա՛ զիս եւ ամրացո՛ նախ ի սատանայական գաղտաձիգ որոգայթից, որ փութայ միշտ անաւրէնն ինքեամբ իւր այսովքն, եւ սուտ եղբարք ի տուէ, եւ ի գիշերի, եւ յամենայն ժամու յանբաւ եւ ազգի ազգի որոգայթ իւր արկանել զիս, յորմէ պահեա, ամենագո՛ւթ Սուրբ Հոգիւ, զհոգի եւ զմարմին իմ ի հնարից նորա:

Պահեա՛ զիս յանաւրինաց սրոյ եւ ի գերութենէ փրկեա՛ զիս, եւ յաւազակաց ի գողոց եւ յայլոց, որ չարայոյզք են ի մարդկանէ:

Պահեա՛ զիս, մարդասէ՛ր Հոգիւ Սուրբ, եւ յայլայլման չար ժամանակէ, յորժամ ըստ ծովացեալ մեղաց մարդկան շարժեսցի բարկութիւն Քո ի վերայ աշխարհի՝ յանխնայ արկանել եւ կորուսանել զազգս մարդկան, զի ես փրկեցայց |361| ողորմութեամբ Քո ի բարկութենէ պատ[ժ]ոց եւ խաղաղութեամբ հասից ի նավահանգիստ կիտի կենաց իմոց:

Պահեա՛ զիս, Աստուա՛ծ իմ, Հոգի՛ւ Սուրբ, եւ ի բռնութենէ մարմնոյս իմոյ, որ կարեաւք մեղաց ախտացեալ՝ հակառակ լինի ընդդէմ հոգւոյս եւ մտաց իմոց, եւ ջանայ ի Քո սուրբ հաճոյիցն մերժել եւ կորստակից ինքեան առնել:

Դո՛ւ, Տէ՛ր բարերար, արգե՛լ եւ կարճեա՛ զսա ի յարձակմանց իւրոց, գարշ եւ ատելի ցոյց զամենայն ցանկութիւն սմա որպէս եւ են իսկ, զի միաւոր միամիտ ջանիւ յորդորիչ եղիցի հոգւոյ իմոյ ի բարի: Ընդ նմին պահեա՛ զսգայարանս իմ զաւրութեամբ Քո յիւրաքանչիւր վնասուց եւ միշտ ի բարիս առաջնորդեա՛, յոր եւ արարեր եւ կարգեցեր զսոսա, որպէս զի տեսանելեաւքս մի ի ցանկութիւնս պիղծ եւ ի յաչաղանս կամ այլ ինչ չար հայեցուածս: |362| Այլ միայն ի Գիրս Աստուածաշունչս պատուիրանաց Քոց եւ ի բարի արարածս Քո, որովք ի գիտութիւն Քո առաջնորդեցայց, եւ բովանդակելի արարածովքս զանբովանդակելի Արարչիւ զիմաստութիւն տեսից եւ զմշտնջենաւոր եւ զզաւրութիւն եւ զաստուածութիւն Քո: Ընդ նմին եւ զլսելիս իմ կնքեալ պահեա՛, Հոգի՛ւ Սուրբ, զի մի՛ բանք չար բանսարկութեան, եւ չարախաւսութեան, եւ լկտութեան ծաղու, եւ խեղկատակութեան մտանիցէ սովաւ յոգի իմ, կամ մատնութեան եւ այլ կորուսիչ իրաց, այլ միայն լուր աստուածային աւրինաց Քոց, եւ ձայնք աւրհնութեան եւ աղաւթից սրբոց եւ խնդրուածք աղքատաց կարաւտելոց: Ընդ նմին եւ զճաշակելիս եւ զբանական գործարանս իմ կնքեալ փակեա՛ եւ ամրացո՛ ամենակեցոյց ամենապահ շնորհաւք Քո, Հոգի՛ւ Սուրբ, զի մի՛ յանարժան եւ յանսուրբ |363| կերակուրս մերձեսցի երբէք կամաւ կամ յակամայ, գիտելով կամ յանդէտս, կամ քան զպէտս հարկի կարեաց յառաւելութիւն ելանիցէ, այլ ի չափու կացցէ արժանապէս՝ մերձեալ ի սուրբ կերակուրս ծանր հարկի բեռնաւորութեանս, որ կայ ի վերայ մեր: Եւ վասն երկրորդիս զսուրբ մարգարէին հայցեմ ի Քէն:

Դի՛ր, Տէ՛ր, պահապան բերանոյ իմոյ զամենազաւր Աջ Քո երկիւղիւ Քո, եւ զուռն ամուր շրթանց իմոց զնչան ամենակեցոյց խաչին զաւրութեամբ իւրով, եւ ի ներկուածոյ աւծման ամենասուրբ արեան Միածնին կնքեալ եւ փակեալ անխոտորելի սիրտ իմ ի բանս չարութեան, հիմնեցո՛ եւ բեւեռեա՛ զսա յերկիւղ Քո սուրբ: Զի մի ի սմանէ չարութիւն ամենեւին ելանիցէ ընդ շրթունս իմ, զոր գանձարան անուանեցեր ի մարդ չար, եւ յանուանէ |364| թուեալ սպառնացար, թէ՝ «Այս են, որ պղծեն զմարդն» (Մարկ. Է 23):

Արդ, արգե՛լ եւ փակեա՛, Տէ՛ր Աստուած, զշրթունս իմ այնպիսի չարեաց, զի մի՛ երբէք բանայցի, եւ զսիրտ իմ, զի մի՛ երբէք խորհեսցի զայնպիսի չարիս: Այլ գանձ բարեաց ըստ բարի մարդոյ շտեմարանեա՛ յիս: Զի նովին բացից զբերան իմ ի հաւատս, ի խոստովանու-

թիւն, յաղաւթս, ի պաղատանս, յաւրհնութիւնս, ի գոհութիւնս, ի բանս Քո, յաւրէնս Քո, ի հրամանս Քո, ի դատաստանս Քո, ի սպառնալիսն Քո, ի յոյս, ի սէր Քո, ի գործս Քո ընդ ամենայն ժամանակաց եւ ի բանս բարիս, եւ զբովանդակ մարմին իմ ամրացո՛ երկիւղիւ Քո: Զհոտոտելիս իմ ի պիղծ յիգական մեղկ եւ թոյլ խորհրդոց առնուլ միայն զճաշակս անուշահոտութեան Հոգւոյդ Սրբոյ: Եւ զոտս իմ պահեա ի չար ընթացից՝ ըստ չարարշաւ մարդկան, |365| եւ միայն ի բարիս ճանապարհ հորդել եւ յաղաւթս ի ծունր ի Սուրբ Եկեղեցի Քո՝ ի յաւգուտ գործոյ եւ աշխատութեան, առ ի պէտս եղբարց: Եւ զձեռս իմ պահեա՛ յամենայն վնասակար իրաց՝ մի՛ գրկել, մի՛ գողանալ, մի՛ յափշտակել, մի՛ ի պիղծ եւ աղտեղի ի շաւշափումն գալ յիմ եւ յաւտար մարմինս, յորմէ կապեա՛ եւ կարճեա՛ զսոսա լուծանելի, Տէ՛ր Աստուած իմ: Ընդ որոյ եւ զշրթունս իմ եւ զերեսս, եւ տուր միայն ի բարիս շարժել զսոսա ի գործս, յարուեստս՝ ըստ պիտոյից եղբարց՝ ի սպասաւորութիւն առ տկարս, յաղաւթս՝ ի համբառնալ առ Քեզ առանց բարկութեան եւ երկմտութեան, որ է պատարագ սուրբ: Ի տուրս ողորմութեան կարաւտելոց միշտ սոքաւք զՔեզ աղաչել յամենայն ժամ եւ արասցես զսոսա սուրբ եւ անարատ յամենայնի, զի համարձակութիւն կալցի |366| տարածանել առաջի Քո եւ անձանձիր ի գրել զպէտս հոգեւոր աւրինաց Քոց, յորժամ պէտք ինչ իցեն յաւգուտ եւ ի շահ հոգւոց եղբարց: Եւ զգլուխ իմ պահպանութեան Հոգւոյդ Սրբոյ առ իս ընդ սոսա, եւ նախ զսոսա զոգիս իմ, զմիտս եւ զխորհուրդս պահեա՛, ամենազո՛ւր Տէր: Զի իշխանապէս առաջնորդեալք եւ ըստ իմում բնութեանս մշտաշարժ ի բարիս եղիցի ըստ կամաց Քոց, եւ անշարժ ի չարիս անզբաղապէս ցանկ վերացեալ յերկրաւորացս ի խորամանկութենէ, ի մարդահաճութենէ. պահեա՛ զսոսա Աստուած իմ, Հոգի՛տ Սուրբ: Մի՛ երկմտութիւն ի բարիս, մի՛ երկիւղս ի սէր, մի՛ երկբայութիւն ի հաւատս՝ ըստ Քեզ եւ պատուիրանաց Քոց եւ գործոց Քոց ի սկզբանէ: Եւ անհաս տնաւրէնութեան Միածնիդ մտցէ յիս ամե|367|նեւին, այլ լցո՛ զհոգի, զմիտս եւ զխորհուրդս իմ ամենալոյս արարչութեամբ կամաց Քոց: Ողջախոհ ամենայն սրբութեամբ, լի բոլոր հաւատովք, փոյթ եւ սէր առ Քեզ ի վեր քան զգաւրութիւն իմ ջերմ՝ ի յընդունել զշնորհս Քո եւ առնուլ զգիտութիւն ճշմարիտ լուսոյտ, բանալ արժանապէս ըստ մարգարէին զբերան կամաց իմանալի, եւ լնուլ ի Քէն զանբաւելի եւ զանճառ պարգեւս Քո, որպէս զմիտս սուրբ եւ հոգի ուղիղ հաստատելով յիս, յայսմհետէ մինչեւ ի վաղնճան արժանի գտայց ասել, թէ՝ «*Խորհուրդք իմ արդարութիւն Քո*» (*Սաղմ ՃԺԸ 24*):

Եւ այժմ զինդրականն լցցի բերան իմ գոհութեամբ, որպէս աւրհնեցից զփառս Քո, որպէս զի այսու աստուածական պահպանութեամբ ի յընդունականն արժանի եղէց վերանալ յաղաւթս եւ ի խորոց սրտէ կարդալ առ Քեզ, Տէ՛ր:

Ընկա՛լ, Սո՛ւրբ Երրորդութիւն, զպաղատ|368|անս իմ առաջի խոնարհ, քաղցր եւ ողորմած տէրութեանդ Քո՝ զխոստովանութիւն, զաւրհնութիւն, զգոհութիւն, զինդրուածս, զամենապահ շնորհս եւ ի բովանդակ բանս աղաւթիցն, հաշտ եւ քաղցր ակամբ հայեա՛, Տէր իմ: Եւ կատարեա՛ զամենայն եւ ընդունելի եղիցի Քեզ որպէս աղաւթք, եւ ընծայք, եւ պատարագ սրբոցն ի սկզբանէ, որովք հաճոյ եղեն Քեզ, եւ հոտոտեցար անկարաւտդ Աստուած ի հոտ անուշութեան սրբութեան նորա: Եւ զիմ զմեղաւորիս եւ զղջացելոյս աղաչանս նուիրականս ընկալ որպէս զառաջին արդարոյն Աբելի եւ զերկրորդ նախահաւրն Նոյի եւ

զհաւրն հաւատոյ Աբրահամու, եւ զհնագանդութիւն, եւ զերկիւղ պատարագելոյն Իսահակայ եւ զաւրհնութիւնն Յակոբայ:

Ընկա՛լ, բարերա՛ր Տէր, որպէս զպատար|369|ագն Մովսէսի նախամարգարէին եւ զառաջին քահանայապետին ի Քէն աւծելոյ զԱհարոնին, զՍամուէլին ընտրելոյն յորովայնէ: Եւ զդաւանութիւնն մարգարէին եւ աւծելոյն ի Քէն թագաւորի զԵզեկիային եւ զՈվսիայն, զԵսաւայն: Եւ որպէս զչարչարանսն նախամարտիկ նահատակին Յովբայ, զԴանիէլի ի մէջ առիւծոցն եւ զերից մանկանցն ի հնոցին: Եւ զԵղիազարու քահանային, որ զինքն մատոյց Քեզ պատարագ, զեւթն վկայիցն եւ մաւրն Շամունեայ:

Ընկա՛լ, ողորմա՛ծ Աստուած, որպէս զամենայն Քոց զաղաւթս զառաքելոցն, զմարգարէիցն, զմարտիրոսաց, զհայրապետաց, զճգնաւորաց, սուրբ կրաւնաւորաց, զքահանայից, զվարդապետաց: Ընդ նոցայն զիմ՝ մեղաւորիս եւ զղջացելոյս յապաշաւանս |370| զպաղատանս ընկալ, մարդասէ՛ր Տէր իմ: Եւ որպէս զանթիւ ապաշխարողաց, որ մեղան եւ զղջացեալ ճգնութեամբ, ժուժկալութեամբ եւ արտասուաք հաճոյ եղեն Քեզ, Տէ՛ր: Եւ զի ես անհամարձակ եւ կոր անկեալ եմ առաջի Քո, քանզի մեղա՛յ առաւել քան զաւազ ծովու, եւ ի զղջանալս իմում ոչ ինչ բարիս ստացայ՝ ո՛չ նեղութիւն, ո՛չ ճգնութիւն, ո՛չ ժուժկալութիւն, ո՛չ համբերութիւն, ո՛չ առատ արտասուք, ո՛չ բեկումն սրտի՝ որպէս պարտն էր: Նաեւ ո՛չ վիշտք եւ ո՛չ չարչարանք եկին ի վերայ իմ վասն անուանտ Քում սրբոյ: Եւ ոչ ինչ ունիմ յինէն բարի ամենեւին մատուցանել Քեզ, բայց միայն զուղիղ հաւատս եւ զյաւժարութիւն հոգոյս, իսկ Դու, Մարդասէ՛ր, ոչ կամիս զմահ մեղ|371|աւորին, այլ զկեանս: Վասն կամաց Քոց բարեսիրաց ընկալ զաղաչանս իմ զուռայնացելոյս ի բարեաց եւ կեցո՛ զիս վասն զթութեան Քո, վասն անոխակալ քաղցրութեան Քո, վասն մարդասէր ողորմութեան Քո, վասն մեծ, եւ առատ, եւ անբաւ բարեաց Քոց, որ ոչ զոք կամիս զրկել, այլ ամենեցուն տալ ի Քէն աննուազ եւ աննախանձաբար, որք ճանաչել կամիցին զճշմարիտ բարիսդ եւ առնուլ ի Քէն: Վասն որոյ ինձ, որ անագան ծանեա իբր ի մետասան ժամու կոչեցելոցն, ընդ նոսա համարեա՛ զիս, եւ ընկալ զպաղատանս իմ, եւ կատարեա՛ առ յիս զողորմութիւն Քո՝ ընդ որում ապաւինեալ ի բարեխաւսութիւն զթոյ Քում եւ ամենայն սրբոց Քոց, զբարեխաւսականն մատուցից Քեզ զաղաւթս, եւ աւրհնութիւն, եւ աղերս ընդունելի առաջի Քո, Տէ՛ր Աստուած իմ: |372|

Տէ՛ր Աստուած, անսկիզբն եւ յաւիտենական Թագաւոր, ի սկզբանէ սիրեցեր զազգս մարդկան, եւ ողորմութեամբ գոյացուցեր յոչէից զմեզ: Որ յառաջ քան զամենայն յաւիտեանս ծանուցեր զսէր եւ զմիաւորութիւն սրբոց Քոց ի Քեզ, որ ընտրեցեր զնոսա յառաջ քան զլինելն աշխարհի եւ ածեր ի մէջ յամենայն դարս ժամանակաց՝ ի յուղղութիւն, ի խրատ, ի յանդիմանութիւն ամենայն մարդկան, յամենայն յազգս, յիւրաքանչիւր ժամանակս, եւ ժողովեցեր եւ ժողովես առ Քեզ զամենեսեան՝ Դու ի նոսա զոլով, եւ նոքա ի Քեզ միացեալ՝ ըստ որում եւ միացեալ ի գթութիւն Քո համարձակապէս միջնորդելով բարեխաւս են այժմ ամենայն մեղաւորաց, որ դառնան առ Քեզ: Վասն որոյ եւ ես՝ առաջին մեղաւորս անարժանս, |373| զոլով ի նոսա ապաւինիմ եւ զնոցա սրբայսէր զճգնութիւն եւ զչարչարանսն, որ վասն Քո բարեխաւս առ Քեզ ունիմ: Նոցա բարեխաւսութեամբ, որ ի նախակարգութենէ աշխարհի հաճոյ եղեն Քեզ, ընկա՛լ զաղաչանս իմ եւ ողորմեա՛ ինձ՝ մեղաւորիս:

Բարեխաւսութեամբ ամենասուրբ Աստուածածնին՝ մաւր Քո, եւ Յով[հ]աննու Կարապետին, եւ Նախավկայի Քո Ստեփաննոսի եւ որք ընդ նոսա սուրբք էին, ընկա՛լ զաղաչանս իմ:

Բարեխաւսութեամբ սրբոց առաքելոցն երկոտասանիցն եւ եւթանասուն եւ երկուցն ընտրելոցն ի Քէն՝ Պետրոսի եւ Պաւղոսի, Յոհաննու եւ Յակոբայ, Անդրէասի եւ Փիլիպոսի, Թովմասու եւ Բարդուղիմէոսի, Մատթէոսի, Յակոբ Ալփեայ եւ Շմաւոնի, |374| Յուդայ Յակոբեան եւ Մատաթիայի, եւ բոլոր աշակերտաց նոցա՝ եպիսկոպոսաց, եւ քահանայից, եւ սարկաւագաց, եւ հաւատացեալ համաւրէն ժողովրդականաց, որ ի նոցանէ կոչեցան եւ ընդ նոսա էին միաւորեալ, ընկա՛լ զխնդրուածս իմ եւ ողորմեա՛ ինձ՝ մեղաւորիս:

Վասն որոյ եւ ես՝ տառապեալս ի բարեաց, ի բարեխաւսութիւն ամենայն սրբոց ապաւինեալ յաղաչանս, որ դարձայց առ բարեգութ Տէ՛րդ իմ եւ Աստուա՛ծ, եւ զաղաչանաց աղաւթս մատուցից առաջի գթութեան Քո: Աղաչեմ զՔե՛զ, Միածի՛ն Որդի Աստուծոյ, ի բարեխաւսութիւն ամենայն սրբոց Քոց վասն գթութեան Քո, վասն առատ ողորմութեան Քո, վասն անոխակալ անյիշաչարութեան Քո, վասն երկայնամիտ քաղցրութեան Քո, վասն մարդասէր խնամակալութեան Քո:

Հայեա՛ յիս ի մեղաւորս եւ ընկա՛լ |375| զաղաչանս իմ, զՔո տնաւրինական խոնարհութիւնդ առ Քեզ բարեխաւս ունիմ վասն ծառայական մարդեղութեան Քո վասն մեր, եւ վասն չարչարանաց եւ արեան հեղման Քո, եւ մահու եւ խաչի, որովք զամենայն ազգս մարդկան կեցուցեր զմեռեալս ի սկզբանէ եւ զանկեալս յերեսաց Քոց յայսմհետէ, մինչեւ յաւր վաղխճանի իմոյ, զամենապահ, զամենազաւր, զամենակեցոյց Աջ Քո դիր ի վերայ իմ խնամաւք եւ ողորմութեամբ: Եւ Դու պահեա՛ զիս յառաջակայ փորձութեանցն, եւ տո՛ւր ինձ յաւժարութիւն սրտի եւ ջերմ կամս հոգոյ եւ մտաց, զի անպակաս յիշատակաւք եւ առաւել ջանիւ ըստ կարի ապաշխարեցից զմեղս իմ, եւ յաւել զաւրութիւն տկարութեանս իմոյ: Եւ մի ի կամս իմ եւ յանձնիչխան ազատութեանս թողուր զիս: Այլ սանձեա՛ եւ բեւեռեա՛ |376| յերկիւղ Քո եւ ի սէր մի՝ ըստ տարտամ եւ անգաւր զբաղական եւ անյաւժար կամաց իմոց, որ մինչեւ յաւրս յայս թողուր զիս: Այլ արիացո՛ եւ յորդորեա՛ շնորհաւք Քո եւ ողորմութեամբ յիս: Եւ յորժամ մերձեսցին աւուրք վաղճանի իմոյ գթա՛ յիս, Մարդասէ՛ր, զգաստ եւ արթուն պահեա՛ զհոգի իմ յայսմհետէ, հոգա եւ յանձնել զիս սրբոց Քոց ըստ կամաց Քոց, թեթեւ եւ ըստ կարի իմում դիւրակիր արա զցաւս հիւանդութեան իմոյ: Եւ մի՛ տար ինձ անկանել ի մտաց, կամ ի յիշողութենէ, կամ լեզուի իմում թանձրանալ եւ կապել, կամ ձայնի իմում հատանել եւ նուազել, մինչեւ յելանել շնչոյ իմոյ: Այլ քան ի զաւրութիւն եւ խաւսելոյ կացէ յիս, մինչ ի մեկնել հոգոյս իմոյ: Որ զայս |377| աղաչէ եւ խնդրէ ի Քէն հոգիս իմ, եւ նոյնպէս մինչեւ ի ժամն յայն փրկեա՛ զիս եւ պահեա՛ ի մարմնական փորձութենէ եւ յամենայն վտանգից ակամայից եւ ի պատահարաց, որ գան ի վերայ մեր վասն մեղաց մերոց, կամ ի մեր յանպատրաստ հանդգնութենէ եւ կամ ի Քո թոյլ տալոյ եւ թողլոյ ի ձեռաց առ ի խրատ մեղաց: Եւ այսոքիկ են՝ ի սովոյ, ի սրոյ, ի գերութենէ անաւրինաց յառ մեզս, հրոյ հրդեհմանէ ի շանթից, ի գողոց, յաւազակաց, ի յանկմանէ, ի վախից, ի մահաբեր սողնոց եւ ի կերակրոց վնասակարութենէ, ի ցրտոյ, ի տաւթոյ, ի յանկարծահաս ցաւոց: Եւ յայլ ամենայն պատահարաց, որ գան ի վերայ մարդկան, որ յայտնի եւ անծածուկ կան առաջի Քո:

Աղաչեմ զՔե՛զ, Բարեգո՛ւթ, փրկեա՛ զիս |378| յամենեցունց յայսցանէ եւ այլոց, որ սոցին նմանեն: Եւ հասո՛ զանարժան ծառայս Քո խաղաղութեամբ ի նաւահանգիստ վերջին աւուրն, որ ի Քենէ սահմանեալ կէտ եւ չափ աւուրց կենաց իմոց, զի այսպէս փառաւորեցից զամենագութ Տէրդ իմ եւ Աստուած, եւ զվախճանական աղաւթս արժանի եղէց մատուցանել առաջի Քո ողորմութեանդ, կենդանարա՛ր, ամենազա՛ւր Սուրբ Երրորդութիւն, յոյս իմ, ողորմութիւն իմ, ապաւէն իմ, աւգնական իմ եւ փրկիչ իմ, որ Քոյով արարչական զաւրութեամբդ, յորժամ կամեսցիս, եւ փոփոխական անցաւոր ժամանակիս փոփոխումն ածիցես: Եւ զարձեալ ի գերեզմանաց զհոգացեալ մեր բնութիւնս յանմահութիւն նորոգես ոգով եւ մարմնով կենդանի եւ անեղծ Գոյութիւն: |379| Ընդ նմին զերկինս, եւ զերկիր, եւ զամենայն արարածս Քո յաւրինեալ փոփոխես յազատութիւն փառաց ի ծառայութենէ, յորում յուսամք, եւ ակն ունիմք, եւ հաստատեմք հաւատով սրբով:

Ընկա՛լ զիմ մեղաւոր ծառայիս Քո զվախճանական աղաւթս, եւ յորժամ ածիցես զիս յաւրն ահագին եւ սոսկալի՝ ելանել ինձ ի ցաւալից, եւ ի թանձր, եւ ի ծանրագանդաղ մարմնոյս եւ ի բաց թողուլ եւ մոռանալ զմարմինս եւ զայս աշխարհս, որ երեւինս, եւ յանմարմինդ վերանալ աշխարհ, լինել Քեզ յանգիման եւ յաւիտեան միայն զՔեզ տեսանել, Աստուա՛ծ իմ, մինչեւ յաւրն այն եւ ի ժամն յայն:

Ընկա՛լ, Ողորմա՛ծ, զմեղաւորիս անաւգուտ ապաշխարութիւն, որ տարտամ եւ հեղգ, շուտափոյթ եւ լի զբաղանաւք եւ ձանձր|380|ասիրտ, անյաւժար զսակաւ աղաւթս կատարեալ եմ, որ ոչ եմ վստահ եւ ոչ ունիմ ակն, եթէ՝ «Մերձեցան խնդրուածք իմ առաջի Քո Տէր» (Սաղմ. ՃԺԸ 169), կամ թէ՝ «Հայեցար ի նոսա», կամ թէ՝ «Ընդունելի եղեն Քեզ»: Նոյնպէս թերի, եւ անժոյժ, եւ անկատար եղեն պահք իմ, եւ միայն ունիմ յոյս ի զղջման իմում, զատելութին ի սրտէ առ մեղս, բայց շնչականք միշտ կատարեալ են յիս, զոր այժմ Քո զաւրութիւնդ կարեսցէ եւ հատցէ յինէն:

Արդ, Քո ողորմութիւնդ ընկալ Տէր, որ զմի բաժակ ջուրն հով ընկալար, եւ վարձս հատուցման խոստացար, եւ երկու խեր եւ էշն յարգեցան առաջի Քո: Ըստ նմին եւ զիմ անզաւր տկար ի բարիս զփոքունս եւ զանպիտանսն Քեզ ընկալ, Բարերա՛ր, եւ թող զմեղս իմ եւ զառատ, |381| եւ զմեծ բարիստ Քո հատո՛ ինձ՝ զպահսն, զաղաւթսն, զծունր, զցամաքեալ արտասուաց զյաւժարութիւնն միայն, զհեծումն սրտի եւ զերկիւղ զարհուրանաց ահի Քո, զխորհուրդս եւ զյաւժարութիւնս ի բարիս, եւ ողորմութիւնն ըստ կարի յաղքատութիւնս եւ յեղբարս:

Զանթիւ զսղալանս իմ մի՛ յիշեր յայ[ն]մ աւուր, չարամոռա՛ց Տէր իմ, զթերի պակասութիւն իմ, որ յաղաւթս, կամ ի կարդ, կամ ի ծունր, կամ ի խոստովանութիւն, կամ ի խնամ կարաւտելոց եղբարց եւ աղքատաց, կամ ի ծուլութիւն պատուիրանաց Քոց, Տէ՛ր:

Այլ զխոստովանութիւն յանցանաց իմոց ամենայն աւուրս առաջի Քո, Տէր, ընկալ, Բարերար, եւ թող զամենայն, եւ անյիշատակ անտես արա զնոսա, որպէս զի այսու ողորմութեամբ ցնծասցէ հոգի իմ |382| ի ժամու ելից իմոց եւ վհատելոյս աւգնական լեր, Տէ՛ր Աստուած իմ, զի վասն Քո սիրոյդ ոչ եւ մի չարչարանս, եւ վիշտս, եւ նեղութիւնս կրեցի երբէք, եւ եթէ երբէք ողորմեսցիս ինձ, ամենայն ձրի է, եւ Քո շնորհ է: Վասն որոյ զաւարտ եւ զզլուխ աղաչանաց իմոց, որ ի վաղխճանի իմում ընկալ, ամենագո՛ւթ Տէր իմ եւ բազու-

մողո՛րմ Աստուած իմ՝ զողորմութիւնս, զաղաւթս, զծունր զանբիծս: Որ ի սիրոյ երկիւղած եղբարց կատարի յիս եւ բիւրապատիկ հատո՛ նոցա զողորմութեան Քո պարգեւս: Եւս առաւել, որ զսուրբ աստուածաբնակ յարկս տաճարաց Քոց բանայցեն ինձ, եւ զահագին խորհուրդ կենդանարար եւ անմահական մարմնոյ եւ արեան Քո մատուցանեն վասն իմ՝ ի թողութիւն մեղաց եւ ի հան|383|գիստ մեղուցեալ հոգոյս իմոյ:

Դո՛ւ, ամենապարգեւ՛ Տէր, կատարեա՛ զամենայն ըստ մեծի զթութեան Քո եւ մի վասն իմ բազում մեղացս: Եւ կամ եթէ մատուցանողն ինչ իցէ, անտես արասցես կամ բարկանայցես: Այլ Աստուած աւգնական մարդասիրութեամբդ Քո եւ հեղմամբ սուրբ արեամբ ողորմեսցիս եւ հաշտեսցիս ինձ՝ մեղաւորիս, եւ զիմ սակաւ աշխատութեան ընծայս, որ ի նոսա ընդունելի արասցես, Տէ՛ր Աստուած իմ:

Արդ, ամենայնիւ ուրա՛խ արա զծառայս Քո, Տէ՛ր Աստուած իմ, որ կամիս զուրախութիւն եւ զկեանս ամենայն մարդկան, զի յամենայնի աւրհնեցից զամենասուրբ անուն Քո յաւիտեան:

Արդ, ըստ այսմ աղաւթից, եւ խնդրուածոց, եւ աղաչանաց, որ ի կեանս եւ ի մահ արասցես |384| Տէր Աստուած եւ ամենայն ուղղադաւան եղբարց դարձելոց առ Քեզ ի կեանս իւրեանց եւ ի վաղճանի: Ի կեանս, զի նորոգեսցես զհոգիս նոցա եւ Քեզ հաճոյ արասցես, իսկ ի վաղճանի, զի յաւիտենից կենացդ արժանի արասցես, որպէս զի ամենեքեան արժանի լիցին վայելել ի բարիս Քո ի սկզբանէ առաջին արդարոյն Աբէլի, որ եղաւ հիմն մահու, մինչեւ ի միւսանգամ ի գալուստ Քո ամենայն ննջեցելոց՝ եթէ ի հնումն, եթէ ի նորումս, որք ուղիղ հաւատով եւ դարձիւ խոստովանութեամբ ելեալ են յաշխարհէ, ողորմեսցի՛ս, ողորմա՛ծ Փրկիչ, եւ թողութեամբ ազատեսցես զնոսա յամենայն մեղաց եւ յանցանաց իւրեանց: Որ վասն ամենեցուն եկիր յաշխարհ եւ եղեր մարդ ճշմարիտ, եւ խաչի եւ մահու |385| համբերեցեր, զի զամենայն մարդ ազատեսցես ի մեղաց եւ ի դատապարտութենէ մահու եւ ի փառաւոր կեանս վերստին ածցես: Եւ որք լուան լուսաւոր հրամանաց Քոց, փառաւք առ Քեզ վերացան: Իսկ որք ոչ լուան պատուիրանաց Քոց եւ ոչ երկեան ի սպառնալեաց Քոց, այլ հաճեցան մնալ առ սատանայ ի նորին կորուստն, վասն այնպիսեացն ոչ է հնար ումեք աղաչել զՔո մարդասիրութիւնդ: Նոյնպէս վասն թիւրահաւատ հերձուածողացն, որոց չէ հնար ողորմութիւն գտանել ի Քէն կամ յիշատակել պատարագաւք առաջի Քո: Իսկ որք ի սկզբանէ ընդ ամենայն դարս ժամանակաց ուղղապէս հաւատացեալ ճշմարտաբար ծանեան զաստուածութիւնդ Քո, եւ անորիշ միութեամբ ի սուրբս խառնեալ |386| եւ ի նոցին հաւատս հաստատեցան, եւ գդեալ ինչ ի բարձրութենէ սրբութեանն մեղան եւ կամ յանցեան ինչ իբրեւ զմարդիկ, եւ ապա ի մեծ զղջումն եկեալ ի կեանս իւրեանց՝ խոստովան եղեն զմեղս իւրեանց առաջի մարդկան եւ Քո ամենագէտ տէրութեանդ, եւ այնպիսի զղջմամբ խոստովանութեամբ կամ դարձիւ ապաշխարութեամբ ժամանակաւ ելին յաշխարհէ, կամ արդար կենաւք ըստ հասարակաց կարգի քրիստոնէութեան, կամ աւրինաց պահպանութեան ի նախնումն, եւ ոչ են տուեալ զանձինս իւրեանց ի նեղութիւնս կամ ի չարչարանս վասն Քո՝ ըստ իւրաքանչիւր աստիճանի ընտրութեան որոշման, եւ հասակի, եւ դասու կայանի եւ ոչ պակին ի Քէն որպէս եւ սուրբք ամենայն, որք |387| ի խաչ հանին զանձինս իւրեանց կարեաւք եւ ցանկութեամբ հանդերձ, որոց առանձինն է պակ առնուլ ի Քէն:

Արդ, այնպիսեացն ամենեցուն են աղաւթք, եւ պատարագ, եւ խնդրուածք, եւ ուխտք

ի սրբութեան ամենայն Ուղղափառ Եկեղեցեաց ընդ ամենայն տիեզերս, որպէս զի եւ նոքա ի սկզբանէ, ըստ անթիւ, անհուն բազմութեանն իւրեանց, արժանասցին մասին ժառանգութեան սրբոցն հասանել: Եւ յաստեացս առ Քեզ՝ պակեցան առ Քեզ եւ ի սղալական մեղաց սրբել ի ձեռն ամենասուրբ արեան Քո հեղման եւ պատարագի ի վերայ Սրբոյ Սեղանոյ Քո: Եւ սուրբ եւ արժանաւոր աղաւթից, որոց մատչին առաջի Քո, յորոց մի եմ եւ ես՝ դարձելոց մեղաւորացն, որ զայս |388| աղաւթս վասն հասարակաց յուսով ննջեցելոցն ի Քեզ հայցեմ, որպէս զի Դո՛ւ, մարդասէ՛ր եւ ողորմա՛ծ Փրկիչ, զմեզ զամենեսեան առհասարակ յարքայութիւն Քո ժողովեսցես: Եւ մասին միաւորութեան առ ոտս սրբոց Քոց արժանի արասցես, եւ զանցաւոր կեանս անտես արասցես, մինչդեռ ժամանակ է, եւ ոչ է հասեալ գալուստ Քո, եւ ահագին ատեան անաչառ դատաստանի Քո: Վասն որոյ գթա, ամենագո՛ւթ Տէր, ի մեզ յամենեսեան եւ արժանի արա խոստացելոց բարեացդ յաւիտենից, որ ի սկզբանէ պատրաստեցաւ ի Քէն սիրելեաց Քոց:

Եւս առաւել հայցեմ վասն ծնաւղաց իմոց, եւ վարդապետաց, եւ առաջնորդաց ի բարիս հաճոյ|389|ից Քոց եւ բնաւ ամենեցուն, որք գործաւք, կամ բանիւք, կամ բարի կամաւք ինձ աւգուտ են արարեալ, կամ յիմ մեղաւոր կենացս չեն գարշեալ եւ զինքեանս յաղաւթից են յանձնեալ: Ողորմեա՛ ամենեցուն նոցա ըստ մեծի ողորմութեան Քում, զի արժանի լիցին հանգստեան եւ փառացդ յաւիտենից յերկնաւորս ի Քեզ, Քրիստո՛ս:

Նոյնպէս անցաւորացն առ իս եւ զուր կամ ճշմարիտ թողութիւն չնորհեա՛, որք գործովք, կամ բանիւք, կամ բամբասանաւք նեղեալ նախատեցին զիս: Ոչ միայն յիմոցն զիր առ իս յանցեան, այլ յամենայն մեղաց, զոր Քեզէն մեղուցեալ ազատեսցես ըստ մեծի ողորմութեան Քում, եւ յամենայնի ամենեքումք արժանի՛ արա զամենեսեան զմեզ |390| փառաբանիչս լինել եւ երկրպագուս ամենազաւր տէրութեանդ Քո, զի այժմ եւ յանսպառ յաւիտենիս աւրհնեսցուք, եւ գովեսցուք, եւ փառաւորեսցուք զԱմենասուրբ զԵրրորդութիւնդ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Զանազան Ասելիս յիշելոջիվ ի մավրապայլաղա-ՐՈ յԷՐ, Հարվ իմ Ես- Եղբայրվ իմ, Ես-
Ասողս-ած պչեղայի շեսոցէ ի քարին. ամեն: